

Բաժանորդագիրն կԱՆՆԻԻկ թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու- թիւնք եւս կ'ընդունուին:

Փաւստներէն Օսմանեան նամակագրոշմ' կ'ընդունուին 1 դրշ.նոցը 34 փարայի հաշ- ւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ:

ԵԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար գիմել

Սա. Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշէ-Դարու, Թաշխան, քիւ 50

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليهده بفتح قپوسنده طاش خاندده
ه. نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 14

ՇԱԲԱԹ

18 ՅՈՒՆԻՈՒՄ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԵԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հըրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուով, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտակերդէնք, ասուերդէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըրնան արտագրիչներն ապահովել. Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրանաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Գ. Փալազաշեան, Կ. Պոլիս, Պաշէ գաւու, Թաշխան, թիւ 50:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Յ

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին ի Փարիզ. Բալէսթրօ փողոց, Թիւ 39



Դրամագլուխ 3,150 000 ֆրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հէնրի Ժարտօն, Պարնաթան Խան

Գրասենեկի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրութեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուկ թուղթեր, զանազան տեսակ ստուարաթղթեր (մուխովա), լուսանկարչական թուղթեր, մագաղաթանման թուղթեր, նամակաց պոչաբաններ, և այլն, և այլն:

«ԵԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար գիմել «ԵԱՂԻԿ» ի նմրագրատունը:

10—10

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԱՌԱՌ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՅԱՆՈՐ ՀԱՄԱՅՆ ԵՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԵՒՐՈՊԱՅ ՄԷՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈԼՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ գիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքով:

ՊԼԱՄԱՌՈՐ ՄԹԵՐԱՆՈՅԳ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Բարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ք

Հռոտոս, Բալալա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Բիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Դահիլէ, և այլն, և այլն:



MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց և Բեղեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Բիւսկիէի տշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նոր սճեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմաթիւ ձերմակեղէններ, կիտունքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

Շապկի կտակայ	Հատը	14 5 47 1/2
» գունաւոր տպածոյ	»	40 5 28
» Փանէլա	»	21 5 42
» գիշերանոց	»	12 5 27
Անդրազարտիկ	»	40 5 21
» մատամբօլ	»	15 5 22
Օճիք կտակայ	տուզինան	17 5 54
Թեւնոյ »	»	29 5 65
Թաշիկնակ այլ և այլ տեսակ	»	14 5 135
Գուլպաներ՝ ֆիլ տէքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	»	29 5 145
Փոշկապ այլ և այլ տեսակ	տուզինան	3 5 195

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

Շապկի՝ լաւ տպածոյ, գիմպիկուն, պրօտրիով	Հատը	15 5 27
» » » տանթեկայով	»	18 5 31
Վարտիկ » » » »	»	14 5 22
Վարտիկ » » » պրօտրիով	»	11 5 24
Միսօ » » » »	»	20 5 38
» » » տանթեկայով	»	25 5 65
Բօրսէ՝ Բարիդի կուրտէ գործատան	»	26 5 70
Բօրսոժ բամպակեայ, մետաքսեայ	»	11 5 26
Ֆանէլա լաւագոյն տեսակէն	»	15 5 40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով	Հատը	20 5 39
» » » գունաւոր 6 և 12 »	»	65 5 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	»	9 5 17
Գուլպայ՝ ֆիլ տէքօս, բրդեայ, բամպակեայ	տուզինան	40 5 145
Կտուս Վիշիի, մէթրը	»	3 5 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	»	2 5 5 1/2

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ

Յանձնարարութեանց համար պէտք է գրել Վժաղիկի Յանձնակատարութեան Գրասենեակին:

6—52

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՈՒԼ, Ամաթերթ Ազգ. Գրական եւ Քաղաքական. Խճմբադիր-Հրատարակիչ՝ Մատթէոս Մամուրեան: Տարեկան բաժանորդագինն է 80 զրշ. Ազգ. ուսուցչաց համար 50 զրշ: Բաժանորդագրուելու համար կտելի է գիմել Վժաղիկի Խմբագրութեան:

ԾԱՂԻԿԻ Առաջին տալույ շրջանը, գեղեցիկ եւ հաստատուն կերպով կազմուած, կը վաճառի ի գին 50 զրոշ:

Ս Ի Մ Ո Ն Դ Ա Ր Ա Մ Ա Ճ Ե Ա Ն

Ն Ո Ր

Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅՏԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Հրատարակուած է 30րդ. Թերթը: Ամբողջ գործն պիտի բաղկանայ 45 Թերթերէ (այսինքն 720 էջերէ):

Բաժանորդագինն է կանխիկ 15 դանեկան: Դիմել առ հեղինակն ի Պէրպէրեան ապարան:

Բաճաքքն յետ տպագրուածեան պիտի ծախուի ի գին 20 դանեկանի:

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԳԼԽՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բլփիւպլիք փողոց,

Լիւն (Ֆրանսա)

Այսօրու շուրջ 100.000 000 ֆր.

ԼՍԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ հաստատուած է նպատուելու համար փոքր խնայողութեանց, աւրագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմաթիւ են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած գրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ գրամագլխոյ մը վերակազմութիւն: Երաշխաւորութիւնք և Գլխավարք՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած զբաղմունք, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ձերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահէէ—Գաբու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Բառարան Ֆրանսէի 2-րդ. տպագրութիւն, ի Մարտիկ Նուպարեանէ: Գին 20 ֆր: Առանին Տնտեսութիւն, Մ. Մամուրեան: Գին 8 զրոշ:

Առաջնորդ փրկութեան, Գրեց Գաբրիէլ Քահանայ Կիւրէի: Գին 5 զրշ:

Մէքէլլէի անքեամը Առլիյէ. Օ.Տանէաւ Կապույէն Օբնէի: Թարգ. Նիկ. Թոթփոյեան: Հինգ հատորներու բաժնուած, իւրաքանչիւր հատորի գինն է 10 զրոշ:

Մայր ցուցակ Հայերէն ցեղագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա. Միթարեան Միարանութեան: Գին 10 զրոշ:

Սոյն գիրքերը գնատուներէն ստանալու համար դիմել Վժաղիկի Խմբագրութեան:

Բաժանորդագիրն ԿԱՆՍՏԱՆԻ Թուրքիոյ Համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու Համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան Նամակադրողմ կ'ընդունուի՝ 1 զրշ.նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԱԽԻ Վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Սա Տնօրէն-Հրատարակիչ
ՅԱՆՆԱՆ ՊԱԼԱԿԱՇԻԱՆ

Պալա, Պաշկէ-Գաթու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱՂԱԽ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
•••••
نومروده «زاغيك» غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 14

ՇԱԲԱԹ

18 ՅՈՒՆԻՍԻՐ 1892

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Պ Ի Ր Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի

«Ամուսնական Խնդիրներ» գրքին

վրայ,

ի Բժիշկ Միսաք Արամեանէ

Ե.

Այսպէս Սեդրակեան Սրբազանը մարգարտական տեսակէտով մեկնաբանելով հին ազգաց, ընդ որս եւ հրէական ժողովրդի մէջ չհասութեան վերաբերեալ պահանջի ծագումը եւ զարգացումը, կ'անցնի քրիստոնէութեան շրջանին: Քրիստոնէայ եկեղեցին նուիրագործելով ամուսնութիւնը՝ որպէս մեծ խորհուրդ ի Քրիստոս եւ յեկեղեցի, համաձայն նորա բուն նշանակութեան հրահանգիչ կանոններ կը սահմանէ, ի թիւս որոց չհասութեան կանոնը:

«Ինչպէս է վարուել ընդհանուր քրիստոնէայ եկեղեցին չհաս ամուսնութեան նկատմամբ՝ առաջին դարերու մէջ, — Սեդրակեան եպիսկոպոսն այդ հարցին կը պատասխանէ թէ՝ «Մինչեւ չորրորդ դարու սկիզբը եկեղեցին առանձին ինքնասահման օրէնսդրութիւն չէ ունեցել ամուսնական չհասութեան աստիճանի համար, այլ վարուել է մասամբ մովսիսական, մասամբ հռոմէական օրէնքներով: Արդէն յայտնի է թէ՛ առաջինը՝ Մովսիսական օրէնքը՝ թոյլ կուտայ ամուսնութիւնը բաւական մերձաւոր ազգականաց մէջ, այնպէս որ չորրորդ աստիճանի ազգականները կ'ամուսնանային: Երկրորդ՝ հռոմէական օրէնսդրութիւնը երկու տեսակ կը բաժնէր արեւակցութեան ազգականութիւնը՝ — ուղղագիծ եւ կողմնագիծ...: Ուղղագիծ ազգականաց ամուսնութիւնը յիշեալ օրէնսդրութիւնով անպայման կերպով կ'արգիլուէր:

(1) Շար. «Մաղիկ» Նախորդ թիւէն:

իսկ կողմնագիծ արեւակցներու ամուսնութիւնը երրորդ աստիճանի մէջ կ'արգիլուէր եւ չորրորդի մէջ կը թոյլատրուէր: (Եր., 29—31):

Կը կամենայինք իմանալ, թէ Սեդրակեան Սրբազան այս պատկերն իրրեւ իրողութիւն, իրրեւ պատմականօրէն վաւերացեալ փաստ կ'ընծայէ՞ իւր ընթերցողաց թէ՛ իրրեւ ենթադրութիւն: Եթէ կ'ընծայէ իրրեւ ենթադրութիւն, մենք ալ կարող չինք այդպէս ընդունիլ առանց վճռելու, որովհետեւ այդ բանը կանոնադրութեան համար նշանակութիւն չէ կարող ունենալ. — եկեղեցին ենթադրութեանց հետ դործ չունի: Իրեն պէտք եղածն է ճշմարտութիւն եւ փաստ: Իսկ եթէ կը հաղորդէ իրրեւ ստոյգ իրողութիւն, թո՛ղ ներուր մեզ կասկածիլ այս մասին: Եթէ Սեդրակեան Սրբազան ճշգրտութեամբ հետեւէր իւր առաջնորդին՝ Հ. Բառտամեանցի աշխատութեան, կարող էինք ասել թէ նա էլի քիչ թէ շատ մօտ է ճշմարտութեան: Արդէն ինքն ըստ ինքեան տարակուսելի է այն կարծիքը, թէ «եկեղեցին հալածանաց դարերու մէջ ինքնասահման օրէնսդրութիւն չէ ունեցել ամուսնական չհաս աստիճաններու համար»: Բայց միթէ այս հետեւողութիւնը թոյլ պիտի տա՞նք անոր համար՝ որ առաջին երեք դարերու եկեղեցւոյ գերականական յուշարձաններն այդ մասին մեզ ոչինչ չեն տար: Եթէ Ս. Իգնատիոսի առ Պողկիարպոս թուղթը պատմական գրաւոր փաստ է թէ եկեղեցին արդէն առաքելական դարի մէջ հաւատացելոց ամուսնութիւնը իւր տեսչութեան տակ էր առած, եւ որպէս զի նոցա ամուսնութիւնը լինի ըստ առաքելոյն Տերամբ եւ ոչ ըստ ցանկութեան մարմնոյ, կը պահանջէր որ այդ խորհուրդը կատարուի եպիսկոպոսի գիտութեամբ: Այս փաստի առաջ միթէ կարելի է՞ տարակուսիլ թէ, եկեղեցւոյ տեսչութիւնը չհասութեան մասին եւ

առեւտարանի ուսման եւ ոգոյն համաձայն նոր սահմաններ որոշած չէ, աւելի խիստ քան թէ մովսիսական օրինաց թելադրութիւնները: Ապացոյց Ս. Բարսեղի կանոնական թուղթն առ թէ՛ ոգորոս Տարոնացին: Կապաղովկիոյ մեծ հայրապետը եւ տիեզերական վարդապետը այդ թղթի մէջ չհասութեան մասին եկեղեցւոյ մէջ մշակուած աւանդութիւնն այնպիսի պարզութեամբ նշմարել կուտայ եւ այնպիսի խորին իմացութեամբ կը մեկնաբանէ որ այլ եւ տարակոյս չմնար թէ, արդարեւ հալածանաց դարի մէջ եկեղեցին ամուսնական չհասութեան աստիճաններու համար մշակած էր աւելի ընդարձակ սահման քան թէ մովսիսական օրինաց թելադրութիւնները:

Մեզ համար բոլորովին անհասկանալի է, երբ մեր կանոնախօսները՝ եկեղեցւոյ ճիւղագրութեան մասին վարդապետելու ժամանակ՝ օտար աղբիւրներէ իմաստութիւն կը փնտռեն եւ այդ իմաստութեամբ եկեղեցական ճիւղագրութեան կանոնը կը մեկնեն հռոմէական օրինաց կաղապարներով՝ — ուղղագիծ եւ կողմնագիծ աստիճաններով, այն ինչ Հայաստանեայց եկեղեցին մի աղբիւր ունի, ուրկէ յայտնապէս կ'իմանանք թէ՛ եկեղեցին ուսկից առել է իւր ճիւղագրութեան կանոնը, Դա մեր Աստուածաշունչն է: Եթէ ուսեւ առ հասարակ օտար հեղինակաց ներելի է եկեղեցական ճիւղագրութեան եղանակը մեկնել հռոմէական իրաւաբանութեան կանոնով, մեր կանոնագէտներուն կամ կանոնագէտի հռչակ ստանալ ուղղորդելուն աններելի է: Մեր կանոնագէտը այս մասին լիակատար ցուցմունք ունին մի այնպիսի աղբիւրէ, որ օտար հեղինակաց համար փակուած է, այդ աղբիւրն է Ս. Գրոց նախադրութիւնը: Զարմանալի չէ՞ արդեօք որ հեղինակն, որ անակնած ու համարձակ կը նշանակէ իւր կարգակցներու տգիտութիւնը եւ անպատրաստութիւնը, այնքան վեր ի վերոյ եւ չնչին ծանօթութիւն

ունի Ս. Գրոց մատենագրութեան վըրայ որ չգիտէ թէ Ս. Գրոց երանելի թարգմանիչը Ղևտական գրոց ժԸ գըլխի համապատասխան նախագրութեան հատուածներու (ԾԶ—ԾԹ) մէջ ուղղակի ցոյց են տուել թէ, քրիստոնէական եկեղեցին չհասութեան ճիւղահամարի կերպը ուսկից է առել Սեդրակեան Սրբազան պէտքէր գիտնալ թէ Գրիստոնէական եկեղեցին չհասութեան ճիւղահամարի կերպը առել է ուղղակի Ղևտական գրքէն։ Այդ նախագրութեանը, որ օտար ազգաց հին թարգմանութեանց մէջ այժմ չկայ, կրեւ է և միմայն մեր թարգմանութեան մէջ մնացել է լրիւ, այսպէս կը համառօտէ Ղևտական գրոց ժԸ. 6—17 պատգամները։ «Չորից» կրկնելով զԵս եմ Տէր Աստուածն ի բաց տանի զնոսա յեղիւտական ազգաշաղախ ողջութենէ յետից կողմանց ազգակցութեան ի վեր և ի խոնարհ և յառ ի կողմն» (Ղևտ. ժԸ. 1—5)։ «Յառաջին աստիճանն ի վեր կուսէ սաստէ չխայտառակել ողջութեամբ առ իրարս առաջին ազգին՝ այսինքն դուստր առ հայր, կամ որդի առ մայր, կամ խորթ առ մօրու, Դարձեալ ի նոյն ազգ և յաստիճանն ըստ ի խոնարհ կուսէ՝ չխայտառակել հօր՝ զորդւոյ կին, այսինքն զիւր հարսն, կամ զկնոջ իւրոյ դուստր, որ է զիւր խորթ» (Ղևտ. ժԸ. 6—8)։ Իսկ յերկրորդ ազգին և աստիճանին՝ ըստ առ ի կողմն կուսէ, զապականել զիւր քոյր, թէ և յայլ մօրէ իցէ, ի տան ծնեալ, կամ արտաքոյ ի հարձէ հօր, կամ ըզխորթ հօրն իւրոյ, որ է հօրն կնոքուստր, կամ զեղբօր կին, կամ զիւրն քնոջ քոյր։ Եւ ի նոյն աստիճանի ըստ ի խոնարհ կուսէ՝ մի խայտառակել զհօրն թոռնեայ՝ որ է իւր որդւոյ կամ զքստներ դուստր կամ զհարսին դուստր զորդւոյ կնոջ, որ է որդւոյ խորթ, կամ զխորթուն դուստր» (Ղևտ. ժԸ. 9—11)։ «Իսկ յերրորդ ազգի և յաստիճանի ըստ առ ի կողմն կոյս չմոտանել առ իւր հօրաքոյր կամ մօրաքոյր կամ հօրեղբօր կին։ Իսկ ի խոնարհ կողմն չմոտանել առ իւր խորթուն թոռնեայն կամ առ հարսին թոռնեայ» (Ղևտ. ժԸ. 12—17)։ Այս վկայութենէն յետոյ բոլորովին պարզ է թէ ո՞ր աստիճան տկար է Սեդրակեան Սրբազանի պնդումը թէ՝ «եկեղեցին կողմնագիծ արիւնականներու ամուսնութիւնը կ'արգիլէր երրորդ աստիճանի մէջ և կը թոյլատրէր չորրորդի մէջ»։ Սեդրակեան Սրբազան մատենանիչ մընէ առաքելական կոչումած կանոնաց 19րդը. բայց այդ կանոնէն այսպիսի մի եզրակացութիւն հանելու համար, հարկ է չատ սակաւ ծանօթութիւն ունենալ կանոնագրութեան մատենագրութեան

թեան վրայ և բոլորովին անպատրաստ լինել կանոնագիրք վերծանելու։ Սակաւ ինչ հմուտութիւն այդ մատենագրութեան վրայ՝ պիտի բաւէր հասկնալու համար այդ չարարատիկ կանոնի բուն նշանակութիւնը՝ ծագման պատճառաւ հանդերձ, այսինքն մի ուրիշ վաւերական փաստի՝ Թէոփիլէս Աղեքսանդրացու կանոնաց 5-րդ յօդուած և ցուցմունքով։ Առաքելական 19րդ կանոնը հին կանոնագրութեան ցուցմունքով սահմանուած է անոնց համար, որոնք տակաւին հեթանոսութեան մէջ այսպէս ամուսնացած լինելով, մկրտութենէն յետոյ ալ առժամանակ մնացել էին այդ տեսակ ապօրինի կենսակցութեան մէջ։ Այսպիսիք կը մերժուէին ժառանգաւորութենէ, կղերական դասակարգէ։ Իսկ որոնք որ մկրտութենէն յետոյ հեռացել էին այդ տեսակ խառնակութենէն, Թէոփիլէս Աղեքսանդրացու 5րդ. կանոնի շարութեամբ՝ կարող էին մոտենալ ժառանգաւորաց կարգը, որովհետեւ մկրտութեան Ս. Խորհուրդը կը սրբէր հեթանոս կենցաղի մեղքը։

Սեդրակեան Սրբազան եթէ հետեւել է Հ. Բատտամեանցին, լաւ կը լինէր, եթէ բոլորովին հետեւած լինէր, որովհետեւ լուսահոգի իրաւաբանի հայեացքն այնքան դրական է որ կարող էր վստահութիւն ներշնչող առաջնորդ լինել՝ քննութեան առնուած խնդրոյն աննախապաշար խուզարկութեան մէջ։ Ապա թէ ո՛չ, չեղուի նորա հայեացքէն, մինչև անգամ թեկնածել նորա կարծիքը հերքելու, աւելի պատրաստութիւն հարկ է ունենալ ասոր համար և աւելի հմուտութիւն՝ կանոնագրութեան գրականութենէն։ Առհասարակ, ինչպէս մի լոկ ենթադրութիւն է թէ եկեղեցին հալածանաց դարերու մէջ չհասութեան խնդրոյ համար վարուել է մասամբ հռովմէական, մասամբ մովսիսական օրէնքներով, այնպէս ալ անհիմն է պնդել թէ եկեղեցին մովսիսական օրինաց մէջ իւր լրութիւնը զըտած է։ Թէ այդ օրէնքներով վարուել է և յայտնութեան պատգամն է միակ առաջնորդ ունեցել քան թէ կողմնակի դիտումներ, այդ մասին վիճելն աւելորդ է։ Սա ալ անտարակոյս է որ այդ օրէնքները չէին կարող կատարեալ համարուիլ՝ Տէրամբ և Տիրոջ տոնի առաջ կատարուող ամուսնութիւնը պահովելու համար ազգաշաղախութեան մեղքի բոլոր տեսակներէն։ Այդ օրէնքները՝ չհասութեան նկատմամբ՝ առաւել աչքի ընկնող և իրենց խայտառակութեամբ սոսկում բերող զուգաւորութիւններ էին, — եգիպտական և քսանական մեղքեր, — քան թէ ազգաւորջութեան մեղքի բոլոր տեսակները։

Եթէ կ'ընդունինք որ Ղևտական գրոց ժԸ գլխի 6—17 հատուածի մէջ նշանաւորուած չհասական դէպքերը բոլորովին կ'արտայայտեն յայտնութեան ընդհանուր պատգամի լրութիւնը և վերջաւորութիւնը՝ «Մարդ ոք մարդ տաւանայն ընտանութիւն իւր մի մերձեցի» — այն ժամանակ անհասկանալի պիտի մնայ թէ ի՞նչու Օրէնսդիրը՝ Ի. գլխի մէջ որոշուած արգելքներու դէմ մեղանշողներու պատիժը նշանակելով, մի նոր պատգամ ալ կ'աւելացնէ։ «Եւ այր ոք, որ առնուցու զկին և զմայր նորա (զոքանչը) . . . հրով այրեսցին» (Ղևտ. Ի. 14)։

Այս և ուրիշ փաստեր աչքի առաջ ունենալով, առաջին դարերու եկեղեցւոյ հայրերը և վարդապետները՝ անշուշտ պիտի արժարժէին չհասութեան աստիճանի մասին աւելի խստակրօն դադարներ քան թէ մովսիսական օրինաց թոյլատրած ճիւղագրական աստիճանները։ Թէ այդ դադարները արգաւանդ հողի վրայ ընկնելով խորին արմատ պիտի ձգէին հաւատացելոց բարոյական կեանքի մէջ և անփոփոխ աւանդութիւն պիտի դառնային, վկայ Ս. Բարսեղի և Օգոստինոսի ցուցմունքները։ (Շարունակելի)

ՏՈՒՐՂՈՒՏԻ ՊԱՍՏՊԱՆ

Գիւղաքաղաքս, Զմիւռնիոյ վիճակին մէջ, բոլորածե դիրքով ծառաւարդ մեծ պարսիցի մը կը նմանի իւր սահմանին մէջ։ Ոչ թէ միայն դաշտերն՝ արտ և անդաստանք, այլ և տուներն իսկ՝ ծաղիկներով իրենց գլուխը զարդարող պչրասէր երիտասարդահայ նման՝ սիրած են սքանազարդիւ մրգաբեր և գեղեցկաստուեր ծառովք և տնկովք։ Կըլիմայն՝ բարեխառն գօտւոյն կարծես միջնակէտը լինելով, և ջուրն՝ միակ ջինջ աղբերակէ մը միշտ զով և մաքուր հոսելուն առթիւ, պատուական հովասուն և առողջարար օդ մը ունի։ Սոյն աւանի Տուրղուտը յորժորժումը՝ ծագումն առած է Տուրղուտ անուն թուրք հովուէ մը որ՝ ո՛ր գիտէ, քանի՜ հարիւրաւոր տարի առաջ՝ աստ հողաբլրոյ մը վրայ վրանաբնակ եղեր, և իւր ընտանեացն բնակավայր հաստատուել է։ Ուստի կը նկատուի թէ այս աւան անկէ առաջ ամայի և անշէն էր։ Եւ երբեմն՝ գլխաւոր հնութեանցն նշանաց նայելով, ձենովացուց նման ազգութեան մը մարտկոց և կամ ապաստանարան եղած է։

Ի տեղիս գլխաւոր հնութիւն մ'է պին պիւր քէփէլէր. կոչուած հողաբլրոց առաջին բլուրն որմէ՝ սկսեալ մինչև Ալաշէրի վերջ կ'աւարտի հազար բլուրն։

Այս բլրոց չատերն Եւրոպացի հնախուզից կողմանէ ժամանակին խուզարկուած պեղուած, և հնութիւններ գտնուած են կ'ըսուի: Իսկ աստի առաջին հողաբլուրն, որոյ շուրջն ինչպէս նայիս, իբր ճարտարածոյ կաղապարէ թափուած զարմանալի գմբէթ մը կ'երևի, իւր կեդրոնատունկ հինաւուրց ձիթենույ խորհրդաւորութենէն իսկ կը կասկածուի թէ՛ նա հնախուզից բաձէն բռնէն կոյս մնացած՝ հնութեանց թագուցարան մ'է: Այս բլրավայրն բարեբաղդաբար տեղւոյս Հայոց վաղեմի գերեզմանատունն է, ինչպէս աստ և օտարազգիք աւանդաբար Էմէնի քէփէսի անուանելով կը վկայեն, և կը վկայեն անդ թաղուած Հայոց անթիւ մեռելոց ոսկերտութիւնն, բայց դժբաղդաբար ցաւալի է և ուշադրութեան արժան, որ այսպիսի պատուական գերեզմանատուն մը եկեղեցիէն դուրս ինչ հեռավորութեամբ դժուարութեան համար, դադրեր է դեռ քիչ ատենէ ի վեր՝ հայ մեռելոց թաղումը ընդունելէ: Ուստի հարկ կ'զգամք հրաւիրել նուիրական տեղեաց և յիշատակաց նախանձախնդիր անձանց ուշադրութիւնը, որ փափաքին ի գործ դնել, ըստ նախնի սովորութեան անդ մեռել թաղելու հարկ և սովորութիւնը ի բաց բառնալով և նորա չորս կողմը պարիսպ քաշելով և մէջը ձիթենի և այլ պատշաճ ծառեր հասցնելով, սուրբ և յարգի պահել զայն, ինչպէս որ վայելէ գերեզմանատանց և նուիրական տեղեաց: Սոյն գերեզմանատնէն՝ անշուշտ գերեզման փորուած ատեն հանուած բերուած լինելու են տեղւոյս եկեղեցւոյ բակը գտնուած երկու հնութիւնքն: Մին՝ կճեայ կռածոյ սարսափելի առիւծ մ'է, որ ձեռն ընդ փորովն՝ փռուած՝ եղան գլուխ մը թաթից տակն առած ուտել մոլած է, բայց առիւծին գլուխը խորտակուած և փճացած լինելուն առթիւ, այն՝ կատարեալ հնութիւն մի լինելէ թերացած է: Երբեմն կիներ այս առիւծին ուխտի կուգան, փորձելով և հաւատալով թէ նորա վրայ նստող կինը ծննդական և դիւրածին կը լինի: Իսկ միւսն՝ քառակուսաձև խոշոր քարի մը վրայ բարձրաքանդակ կոփուած երեք հին քաջերու կռիւ մ'է, գլուխներն հին ոճով սաղաւարտ, ձեռքերն՝ սուր և վահան և զրահազգեստ: Բայց ինչ օգուտ, և այս՝ տգէտ մարդոց ձեռքէն եղծուեր, և ուշադրութեան առնելոյ բուն կէտերէն և հնութիւն մի լինելոյ արժէքէն զերկ մնացեր է: Այս կարգի հնութիւն մ'է և ի վարի թաղն իմ աղբեր առջև հաստատուած տեսակ մը սպիտակ կարծր մի քարէ զարմանաքանդ ահագին տաշոն, որոյ չորս

անկիւնն՝ ընդ երկար շղթայաձև՝ չորս սոսկալի ցլու գլուխներ կոփուած և կերտուած են:

Աւանիս և մի գլխաւոր հնութիւնն է՝ բոլոր դիւղս արբուցանող մի աղբերական զարմանալի քարկիր ականքն, որոց յարակից և ամրապինդ կամարակալից վրայ ամրամէ բնութեան բերմամբ և շարժմամբ դիզակուտուած լինի ու հողին բարձրութենէն կարելի է ուսումնասիրել թէ՛ այս ահագին ջրուղին քանի՛ հարկաւոր տարուան շինուածք է: Սոյն քարկիր կամարակալ ականք մէջ՝ ուր ջուրն սոսկալի խոլանոք կը սուրայ, մարդ կրնայ համարձակ քաշել ճեմել, եթէ ջրոյն սարսափաձայն հոսանքին դիմանայ: Փորձեր են քիչ տարի առաջ հետազոտ մարդիկ՝ լապտեր ի ձեռին գաղտագողի ման գալ այս սարսափալ ջրուղւոյն մէջ, բայց հազիւ քառորդ ժամու չափ ոտնփոխ լինելէ վերջ, կարողացեր են միայն ետ դառնալ, որով անհասկանալի մընացեր է ցարդ ջրոյս բուն ակը, և չկայ ստոյգ ծանօթութիւն տուող թէ այս հնական ջրուղին մինչև ո՞ր կը տեւէ և ցոլի կը վերջանայ: Այս ջրականք տեղւոյն ի հարաւակողմն ինկած լեռնադաշտէն դէպ ի յաւան՝ օձապտոյտ և խիստ խորհրդաւոր չափաբերութեամբ շինուած են, զոր կը հաստատեն երբեմն խախտած տեղեացն վրայ ի հարկին շինուած ջրհորի պէս ոլորտակ ջրերդներն որոց վրայէն կարելի է դուրս ջուր առնուլ և իբր 10—12 գրկաչափ խորութենէն իմաստասիրել այն հնաշէն քարկիր կամարաց վրայ կուտուած հողին և ժամանակին չափն ու հստակ: Այս ջուր քաղաքին մօտ իբր ի մասնաւոր ամրի հաստատուած ջրարածնարան մը ունի, ուրկէ կը բաժնուին թրծուն ագուգայիւք տեղւոյս բոլոր տանց և պարտիզաց ջուրերն: Քիչ կը գտնուի տուն՝ որ այս ջրէն աղբիւր չունենայ: Նոյն ջրարածնարանի շրջավայրքն՝ որ սոսկ պաշտ կ'անուանին, ջրոյն պէս զովարար և ամէն տեղէ աւելի օգտասուն և առողջարար վայրերը լինելուն համար, Դասապաղուոյն՝ իբրեւ ծովեզերեայ քարափունք, սիրելի ձեմավայրն և ըզբօսատեղին եղած են: Անդ է տեսանել սքանչելապէս, երբ օդն ու ժամ դիպող և ներող են և արևն կ'սկսի ի մայր խոնարհիլ, վերը յերկին՝ վերջալուսին յամպըս գունած հրաշագան փայլն ու գեղըն, վարը յերկիր՝ հագուած չքուած երիտասարդուհեաց և երիտասարդաց ի քաղցր սիւք՝ սէգ ման ու ձեմն, ջարդարեւ յոյժ սխրալի է: Եւ քանի յառաջ վեր երթաս, օդն ու տեսարանն այնչափ կ'սքանչելանայ, և կ'զգաս թէ մշտագարուն և յարազուարճ ծաղկաւ-

տանի մը մէջ ման կուգաս: մանաւանդ այն դիմացի բնապաճոյճ հողաբլրոց այնչափ մօտ և զգալի տեսքն՝ մարդու սիրտը այնպէս գրգռելի հրապոյր մը կը նեղնչեն, որ հա՛ վաղեմանոնց գրկուիմ կ'ըսես: Այս բնագեղ զբօսավայրից բարձրագլուխ կը պանծայ Տէյիւմէն իւսքիւ կոչուած հողաբլուրն, որ հինաւուրց և ամբարձուղէշ նոճավք և բունչովք զարդարեալ դալարագեղ մարգաստան մ'է, և որոյ ստորտը կը գտնուի ջրաղաց մը, ուր կը դառնան երկանաքարք ցորենն աղալ ահագին շունդիւ: Բայց չմոռնամք, այս զուարճավայրից գրեթէ կեդրոնը՝ իբրեւ արեգակն ի սպիտակ ամպս կը փայլի Օգոստ: օսմանեան պետութեան նորակաւոյց և գեղեցկաշէն մի գինարանն և զօրանոցն, ուր կը պահուին և կը մարզուին Օսմ. ղէնք և զօրք: Եւ այս պետական շէնք նոր փայլ և պանծալի շուք ածած է տեղւոյն ծաղկման և բարգաւաճման:

Տեղւոյս և մի հնավայրը կը համարուի՝ աւանէս իբր երկու ժամ հեռու՝ քէփէ ըսուած տեղն, որ քանի մը տունէ բաղկացեալ պէսսաւի կոչուած տեսակ մը՝ աղանդաւորաց սեփական բնակավայր մ'է: Աստ՝ սառնորակ ջրոյն և ուշադրաւ տեղւոյն համար, թուրք և հայք շատ կը սիրեն երթալ ամառն խնճոյք և խրախուս կաղմել: Հին փլածոյ աղօթավայր մը ունի, որոյ գմբէթին վրայ երեք հինաւուրց նոճի կայ, որոց համար կ'ըսեն թէ եօթը տարին մի անգամ ընդ միշտ մին կը թոշնի և միւսը կը ծլի փոփոխակի կարգաւ: Յայս վայր կան նշաններ որք կ'ապացուցանեն թէ ի հնումն քրիստոնէից սրբավայր մ'էր աստ:

Անուանի են նոյնպէս՝ աւանէս իբր երկու ժամ հեռաւորութեամբ՝ մին յարեմտեան և միւսն յարեւելեան կոյս եղած բնաբուխ ջերմուկներն, յորս ամի ամի պակաս չեն յամառն լողանք տուողք՝ ի բուժումն մորթային և յօդացաւի հիւանդութեանց: Յարեմտեան կոյս եղած ջերմկին մօտ բլրի մը վրայ՝ մեծահատոր ապառաժէ մը կոփուած ուշադրութեան արժան կուռք մը կայ, որոյ ահարկու հայեացքն անշուշտ նշանակութիւն մը ունի: Շատ հաւանական է որ անդ ևս հնոց կռատուն մը լինի, ո՞ր գիտէ, ի՞նչ հնութիւններ պարունակող:

Անուանի են նաև յաւանիս կէնգէռ և պաղա փուկաւոր կոչուած աղբիւրներն, որոց վերջինը բազմաթիւ բազմամեայ և անճոռնաձև կրեայներով լեցուն բնական աւազան մը ունի, ուր՝ կ'ըսեն թէ, քոսոտ և խոցոտ մարդիկ մկրտուելով, խիոյն քոսէ՝ խոցէ կը սըրբուին: Բայց զարմանալի մի տեսարանն

հոս է որ՝ երբ մարդ այս ջուրը մոտենել էր պատրաստուի, ջրայն մէջի բոլոր կըրեայնէրը՝ մեծ ու պզտիկ դուրս կ'ելէն, և կարծես ի յարգանս այցելու լո՞գատուին՝ մինչև լոգանքի խորհուրդը կատարուիլը՝ ջրեզրը ի ցամաք կ'սպասեն և սալա կը նետուին դարձեալ ի ջուրն ստիպելու ճողիեամբ։

Կը թողուի՞ ստել և նկարագրել ի դաշտավայրն աւանիս տառ և անդ, և և արտ և անդ բացումած այն անհամար մշտաբուխ և վճիտ վտակներն գորս գիտող և թուողը կը հրապուրուի բնել թէ՛ Ագենի անսահման գետնէն միայն մի մասն սուղեր՝ այս տեղի գետնի տակերը կը խաղայ։ Ա՛հ, ծարաւ մշտիլը ի՞նչպէս չցանկար եղջերուն պէս չըթներ բանալ կուլ կուլ խմել այս պատուական ջրերէն, և Աստուած ըսել։ Ուստի տեղւոյս արարելից հոլն յոյժ պարարտ և յուսթի է։ անուանի է բամպակն, և դամքան գգամ աստ ևս այդիք շառնալու վրայ են։

(Շարունակելի) Թ. Յ. ԳԱՐԵՆՆԱՆ

ՓՈՔՐԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Իեհնաւիւրդ. — Չորքստանի զեռուն մողէզներու նման։ Մորթն է խայտաբոյժ, մարմինը տափարակ, և թիկանց վրայ խորասրբորտ, ձեռք կարծր և վայր ծռած, գլուխը մեծ և անկիւնաւոր, աչերը խոշոր և դուրս ցցուեալ, լեզուն երկայն համեմատաբար մարմնոյն, որ խոզովակած և կը վերջանայ և վաղիչող է, որով միջատներ կը բռնէ և կը կերակրուի։ Թաթերը հաւատար են և հինգ մատերով։ Գետնաւիւրդն երկչոտ և անմիտ կենդանի մ'է, կը բնակի Ասիոյ, Ալիքիէի և Ամերիկայի ջերմ գաւառները։ Իւրաքանչէր բոլոր դուրս թիւնը լեզուն վրայ է, զոր իրեն նետ կ'արձակէ իւր որսոյն վրայ և կը բռնէ։ Կրնայ շատ ամիսներ անթիւ մընալ, և դիմանալ սառնակի տաքի։ Կը սուր թէ, իւր գոյնը ուղտին պէս կը փոխէ և կ'աւանտ իւր շուրջ գտնուած սաւաղայից գոյնը. այս բանին համար շատ զարմանալիք կը պատմուին։ Այլ այս ձիւղ է թէ անոր բուն գոյնը մի է, և դիպաց համեմատ կը փոխուի։ Սովորական գոյնն է դեղին յարգագոյն, Կանանչ ծաւին վրայ ծաւին ցոլացմամբ կը լինի պայծառ կանանչ։ Երբ բռնեմք զայն ի ձեռն, գոյնը կը սենայ նոյնպէս երբ նեղեմք, այլ և այլ ազդեցութեամբը զանազան միջանկեալ գոյններ կ'աւանտ։ Այս երեւութից պատճառն է ըստ ոմանց թաթին օգտով ուսեանան, որով արեւը քիչ կամ շատ դէպ ի մորթը դուրս կուտայ, և ըստ

այլոց՝ մարմնոյ շնչահաններէն դէպ ի ներս օդ մոտենէ։ Վերջապէս, երկիւղ, հիւանդութիւնք և այլ կրքեր կարծես անոր գոյներուն փոփոխութեան վրայ ազդեցութիւն կ'ընեն։ Այս զարմանալի յատկութեանց համար գետնաւիւրդը նշան եղաւ դիւրափոփոխ մարդոց, որ վտաւց համար կ'զգենուն ամէն տեսակ կերպեր։

ԳԻՍԱԻՐ ՍՍՏՂ. — Ասող նման միւլորակի, որ արեգակն չուրջ կը գտնուի զուգորդական ձևով, և է խիտ արտակերտ։ Գիսաւորք երբեմն կ'երևին իրրե հոծ մարմիններ, և երբեմն իրրե լուսեղէն գոլորշի, առանց ցուցնելու հոտաւորուն մարմին։ Անոնց վրայ կը տեսնուին սովորաբար գլուխ, որ է լայն և փայլուն լուսաւոր զանգուած, այլ խոտն և չիթթ վերջաւորած, աչք, որ գլխուն միջանցն աւելի յատակ և լուսաւոր մասն է, սոսք, որ լուսեղէն մասն է քիչ կամ շատ լայն և երկայն, և որ գլխին սկսեալ կը տարածուի արեգակն հակառակ կողմն, և երբեմն կը բաժնուի շատ ճիւղերու։ Այս որչը կ'երկարի երբեմն մինչև 80 հազար հարաւամիկ։ Գիսաւորքն իտական կարող չէլաւ բացորոշ յայտնել գիտաւորաց բնութիւնը։ Շատ դժուար է սահմանել անոնց չըջան իրենց անկախոն ընթացքին համար։ Կը պտտուին երբեմն արեւելքէն արեւմուտք, և արեւմուտքէն արեւելք, երբեմն ալ հիւսիսէն հարաւ և հարաւէն հիւսիս։ Երբեմն տեսնուեցան դիսաւոր աստղեր ալ, որք ամբողջ օր մը կանդ տեսնելով, հետեւեալ օրը սկսան յաւաքանալ մինչև 40 կամ 45 աստիճան, և սալա շուտով ետ քաշուեցան։

Շատ դիտաւորներ կան՝ որոց շքեղանի ժամանակն այժմ յայտնի է, ինչպէս է նախ Հոլլէյի դիտաւորը, որ կը կատարէ իւր շրջանը 75 տարին անգամ մը, վերջին անգամ երկ ցու 1835 ին ահաւոր մեծութեամբ։ Երկրորդ՝ Հէնքէյի գիտաւորը որ երեք օր կէս տարին միանգամ կը կատարէր շրջան, երրորդ՝ Պիլէյի դիտաւորը՝ որ վեց տարի և երեք ամիս կը կատարէ շրջանը, ևն։ Հին ատեն դիտաւորաց երեւելը կը համարէին մեծ արկածից նշան, և շատ կը վախնային։ Այժմ փարատեցաւ ամէն երկիւղ գիտութեանց ծաղիկելով։

ԳՈՒԼԵՇ. — Եզին տեղակէն, փոյրենի և ճախճախաւ տեղեաց սիրող. կը թաւալի տղմին մէջ, և օրուան մեծ մասը ջրին մէջ կը կենայ. զօրութիւնը հաւասար է երկու եզանց։ Եզին աւելի բարձրահասակ է, վիթխորի, ծանրազանգաւ, և մարմնով կորովի, ճակատը աւելի նեղ է և խոնարհ. ցուկը լայն և եղջիւրները տափարակ դէպ ի աւ-

ջիւրի կողմը։ Յուլին մանչիւնէն աւելի զօրաւոր է մանչիւնը։ Էզը կը կոչուի մատակ։ Երբ չորս ստիւք ունի, կոթն աւելի սեր ունի, և անկէ յօրինուած կարագը աւելի պարարտ է, բայց ոչ համեղաճաշակ։ Միւր կ'ուտուի, լեզուն աւելի բնոր է, ստեն է սե և կարծր, կաշին սպիգային լինելով սուր գործիներու դէմ կը դնէ և կը գործածուի չինելու լանջողակեր, սանապաններ, գօտիներ, ևն։ Եղջիւրներով կը յօրինեն սուսիւր, սանարեր, և ստեղծող կը լեցունեն աթոռներ և բազմոյններ։ Գոմէն է բնիկ Հնդկաստանի, բայց կը գտնուի նաև յԱֆրիկէ, ի փոքր Ասիա, ի Տաճկաստան և ի Իրանի լիւսնիւ։ Յիւտալիա մոցուցին զայն եօթներորդ դարուն, ուր աւելի մեղմ է բնութեամբ։

ԳՈՅՆ. — Մարմինները սեփհական գոյն չունին, այլ սէպտա գոյններ յաւաք կուգան լուսոյ տարրաբաշխութեան, ինչպէս Նեւտոն ցուցուցած է։ Արեգակն սպիտակ գոյնը անցնելով տաղակիէ հատուածակողմէն, կը տարրաբաշխի եօթն գոյներու, և կը կազմէ արեգակն լուսապատկերը։ Այդ գոյները կը կոչուին նոյնանական գոյներ որք են մանուշակագոյն, լեզակագոյն, կապոյտ, կանանչ, դեղին, նարնջագոյն և կարմիր։ ասոնք կը կոչուին նաև պարզ գոյներ, փոքն դի անկարելի է անոնցմէ ուրիշ գոյն հանել որ և է եզանակաւ։ Պարզ գոյներն ի միասին առնելով, սպիտակը կը յօրինուի. անոր սպիտակութիւնը փոխելու համար, կը բաւէ պարզ գոյներէն մին. ի բայց հանել. ինչպէս կորովը հանելով արեգակն լուսապատկերէն, և բազալերելով մնացեալները՝ կ'եննէ կապոյտ գոյնայդ գոյնը կարմիրին հետ խառնելով, սպիտակ կ'եննէ։

Նկարիչները կը գործածեն հինգ գըլխաւոր և հիմնական ներկեր, որովք կը յօրինեն միւսները, և գոյներու զանազան բազալութիւնները. այս հինգ գոյներն են, սպիտակ, դեղին, կարմիր, կապոյտ և սև. իւրաքանչիւր ազգ իրեն սեփհական գոյնն ունի։ Գաղղիոյ ազգային գոյներն են այժմ կապոյտ, սպիտակ և կարմիր։ Տաճկաստանի՝ կարմիր. Իտալիոյ՝ կանաչ, սպիտակ և կարմիր։ Աւստրիոյ և Սպանիոյ՝ կարմիր և սպիտակ։ Անգլիոյ՝ կարմիր և կապոյտ։ Հոլանտայի՝ կարմիր, սպիտակ, և կապոյտ։ Բրուսիոյ՝ սպիտակ կարմիրով պատած, Շուէտիոյ՝ կապոյտ դեղինով շրջապատած։ Տանիսկոյի և Հելլենիոյ՝ կարմիր։ Ռուսիոյ՝ դեղին։

ԲԱՌԱՎԿԻՏ



46)

Շ Է Յ Ք Ս Բ Ի Բ

Վ Ե Ն Ե Տ Կ Ո Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՒՆ

Հ Ա Ն Դ Ե Ս Դ

ՏԵՍԻՆ

Վեներաբիլ. — Դատարան.

(Մեքեն Դուքսը, Ագնուսիսմ, Անթոնիո, Պասանիո, Կրասիանո, Սոլանիո, Սալա-
րիո եւ այլն:)

Դուքս. — Ուր է, Անթոնիո հոգի է:
Անթոնիո. — Պատրաստ Ձերդ Մե-
ծապաշտութեան հրամանաց:

Դուքս. — Կը ցուրմ քեզ, քարասիրտ
թշնամոյ մը յանդիման կը գտնուիս,
անագորոյն թշուառականի մը դէմ, ան-
կարող կարեկցութեան, դատարկ սիրտ
մը յորում ցամքած է գթութեան ամե-
նափոքը կաթիլն իսկ:

Անթ. — Իմացայ որ Ձերդ Մեծա-
պաշտութիւնն բաւական նեղութիւն
կը կրէ մեղմելու նորա խիստ պահան-
ջումները, բայց ինք քանի որ անյող-
դուք կը մնայ և չկայ օրինական միջոց
մը որ կարենայ զիս փրկել նորա նա-
խանձու ճիւղաներէն, համբերութիւնս
իւր միւլեղութեան դէմ պիտի տամ, և
զինեալ անգործ արտով պիտի կրեմ իւր
բռնաւորութիւնն ու կատաղութիւնը:

Դուք. — Թո՛ղ մէկը երթայ ու կոչէ
Հրեայն:

Սոլան. — Դուռը պարսպատ կը կե-
նայ: Ահա՛ կուգայ, Տէր իմ: (Մտնէ
Շայլօք:)

Դուք. — Տեղ տուէք և թողէք որ
մեր դիմաց գայ:— Շայլօք, աշխարհ կը
խորհի, ինչպէս ես եւս կը խորհիմ, որ
քու նպատակդ եղած է պարզապէս
մինչեւ վերջին ժամուն յառաջ մղել ա-
նագորոյն խաղը և յետ վճռոյ ցոյց պի-
տի տաս գութ ու կարեկցութիւն մը
աւելի նորօրինակ որ չերևիր քու ան-
գթութեան երևութիւն մէջ, և դու,
փոխանակ սահմանեալ պատժոյն, որ
լիտր մը միս է այս խեղճ վաճառականին
մարմնէն, ոչ միայն պայմանը պիտի
ընջես, այլ հեզալով մարդասիրաբար և
ազնուարար, պահանջիդ իսկ մէկ մասը
պիտի շնորհես իրեն, գթութեան ակ-
նարկ մը նետելով իւր կորստեանց վը-
րայ, որ վերջերս այնչափ դառնորէն
ծանրացան իւր վրայ, կորստութեան որք
կը բաւեն տապալելու արքայական վա-
ճառականն իսկ, և կարեկցութիւն ներ-
շնջելու պղնձեայ կուրծքերու, կարծ-
րածայռ պոտերու: Հրեայ, ամենքս
կ'սպասենք քո վեհանձն պատասխանին:

Շայլ. — Տէր, Ձեզ հաղորդած եմ

դիտաւորութիւնս, և երդուած եմ մեր
սուրբ Շաբաթի վրայ իրադրոճելու
մարհակիս արտադրած պատիժն. եթէ
մերժէք ինձ զայդ, կը նշանակէ որ
զոք կը մեղանշէք ձեր երկրին օրինաց
ու ազտաութեանց դէմ: Ինձ պիտի
հարցնէք թէ ինչո՞ւ աւելի կ'ընտրեմ
լիտր մը դարչնահոտ միս քան երեք հա-
զար տուքաթ. ստոր կը պատասխա-
նեմ միայն թէ քմահաճոյքս այդպէս
կ'ուզէ, պատասխան մը չէ՞: Ի՞նչ, եթէ
մաւի մը տունդ խանդարէ, և տառը
հազար տուքաթ տամ զայն թունաւո-
րելու համար, ի՞նչ լսելիք կայ: Մարդ
կայ որ խոզին ձայնն չախորժիր, ու-
րիշներ՝ եթէ կատու մը տեսնեն, կը
խելագարին. իսկ այլք՝ երբ տիկ ամեն
իրենց մէջ չեն կրնար պահել իրենց մե-
ղը, զի զգայնութիւնը, մեր կրից պետն,
կ'իմացնէ ինչ որ պէտք է սիրել կամ ա-
տել: Ահա այս է պատասխանս ձեր
հարցման: Ինչպէս որ չէ կարելի հա-
մազիչ պատճառ մը տալ և բացատրել
թէ ինչո՞ւ այս ինչ մարդը չկրնար լսել
խողի ձայնը, այն ինչը տեսնել կատուն
որ պիտանի և անվնաս կենդանի մ'է,
ուրիշ մը լսել տիկն, և սրունք ակամայ
պիտի ենթարկուին նախատինքի, պիտի
նախատուին և իրենք ալ պիտի մղուին
նախատելու զանոնք որոյմէ նախատ-
ուած են: Այսպէս ալ ես չեմ կրնար և
չեմ ուզեր ուրիշ պատասխան տալ, բայց
միայն սա թէ Անթոնիոյ դէմ կ'զգամ
ատելութիւն մը, կատարեալ զգուանք
մը որք զիս կը դրդեն գահավիժել զինքն
ի կորուստ, կը բաւէ՞ ձեզ այս պատաս-
խանը:

Պաս. — Անողոր արարած, այդ պա-
տասխան չէ և չէ կարող արդարացնել
անգթութիւնդ:

Շայլ. — Ստիպեալ չեմ քեզ հաճոյ ե-
րեւոյդ պատասխան մի տալ:

Պաս. — Միթէ մարդիկ իրենց ամէն
չտիրածները կ'սպաննեն:

Շայլ. — Միթէ կարո՞ղ ենք ատել
զով որ չենք ուզեր սպաննել:

Պաս. — Ամէն նախատինքէ ատելու-
թիւն չծնիր միշտ:

Շայլ. — Ի՞նչ, թող կուտամ որ օճը
երկու անգամ խածնէ քեզ:

Անթոն. — Խնդրեմ, խորհեցէք որ չը-
րէի մը հետ կը հակաճառէք. կրնա՞ք
չտա լուս երթալ ծովեզր և հրամայել որ
սովորական բարձրութեամբ տեղի չու-
նենայ մակընթացութիւնը. կրնա՞ք նոյն-
պէս հարցնել զայլին, ինչո՞ւ կ'ահարե-
կէ ոչխարն մայելու իւր դառնուկի ե-
տեւէն. դարձեալ կրնա՞ք արգիլել լե-
րան կաղամախներն չտատանելու ի-
րենց բարձրաբերձ կատարներն և աղ-
մուկ չհանելու՝ չընելով երկինց հովն.
կրնա՞ք և ի գլուխ հանել ամենագոյն:

գալի ձեռնարկն քան ջանալ մեղմելու
(զի ասկէ աւելի դժնդակ բան չկայ)
իւր հրեայ սիրան. ուստի կը խնդրեմ,
նորանոր շնորհներ մի՛ ընէք, ուրիշ մի-
ջոյներ մի՛ փնտռէք, այլ առանց երկա-
րելու և վիճելու, ըրէք ինչ որ կը պար-
տիք ընել. արտասանեցէք դատաւճիռս
և թող կատարուի Հրէին կամքը:

Պաս. — Ահա երեք հազար տուքա-
թիդ փոխարէն վեց հազար քեզի:

Շայլ. — Եթէ վեց հազար տուքա-
թիդ ամէն մէկ մասը վեցի բաժնուի և
որոյ իւրաքանչիւրը մէկ տուքաթ ար-
ժէ, դարձեալ չեմ ընդունիր. ես մուր-
հակիս մէջ գրուածը միայն կ'ուզեմ:

Դուքս. — Ի՞նչպէս զթութիւն կը
յուսաս, երբ որ դու ինքդ այդպէս
անգութ ես:

Շայլ. — Ի՞նչ վճիռ է պէտք է փախ-
նամ, քանի որ չարիք մը չեմ գործած:
Դուք ունիք գերիներ զորս կը գործա-
ծէք իրբեւ էչ, շուն, ջորի՝ ամենագը-
ծուծ և ստոր գոշձերու, վառն զի դը-
նած էք զայնս: Հիմա կ'ըսեմ ձեզ,
ազատ ըրէք զանոնք, ամուսնացեցէք
զանոնք ձեր ժառանգներու հետ: Ին-
չո՞ւ քրտնին բեռներու տակ: Ի՞նչու
անոնց անկողիններն եւս ձեր անկողին-
ներու նման կակուղ չըլլան, և նոցա
քիմքը չվայելէ մի և նոյն համադամնե-
րը: Պիտի պատասխանէք. « Գերիներն
մերն են »: այդպէս ալ ես կը պատաս-
խանեմ. իմ պահանջած այդ լիտր մը
միսը շատ սուղ կերպով դնած եմ,
իմ է այդ և պիտի ստանամ: Եթէ մեր-
ժէք ինձ զայդ, անիծեալ ըլլայ ձեր օ-
րէնքը: Վեներաբիլ վճառգրեմ անգոր
են այսուհետեւ: Արդարութիւն կ'ու-
զեմ, պատասխանեցէք. պիտի տա՞ք ու-
ղածս:

Դուք. — Յանուն իշխանութեանս
կրնամ յետաձգել դատաւարութիւնը
մինչեւ որ Պէլլարիօ հասնի, ուսումնա-
կան տօքթօրն, զոր հրաւիրած եմ
գալ լուծելու այս դատը այսօր:

Սոլան. — Տէր իմ, բանքեր մի՛ փա-
տարանին կողմանէ նոր հասած Բատո-
վայէն նամակներով, դուռը կ'սպասէ:

Դուքս. — Բերէք նամակներն, կան-
չեցէք բանքերն:

Պաս. — Ի՞նչալեւուէ Անթոնիօ, կ'հ,
զուարթ կեցիր: Հրեայն իմ մարմինս,
արիւնս, ոսկրերս և բոլոր անձս պիտի
առնու՝ ի՞նձ համար կաթիլ մը արիւն
թափելէդ յառաջ:

Անթ. — Ես հօտին հիւանդ ոչխարն
եմ, մահուան յարմարագոյնը. փառած
պտուղը միւսներէն առաջ վար կ'լցնայ
գետին: Այսպէս թող ըլլայ ինձ համար
եւս. ամենալուս գործ մը ըրած կը լի-
նիս ապրելով, Պասանիօ, գրելու տա-
պանագիրս:

(Մտնէ Ներսիս, փաստաբանի աշակերտի հազուսով):

Դուհւն. — Բատովայէն կուգաք, Պէլլարիօն կողմէ:

Ներսիս. — Այո՛, Տէր Իմ, Պէլլարիօ յարգանքները կը մատուցանէ Ձերդ Մեծապայծառութեան: (Տալով նամակն)

Պաս. — (Շայլօքին) Ինչո՞ւ կը սրես դանակդ այդքան եռանդեամբ:

Շայլ. — Այդ սնանկին ինձ հատուցանելիք մասը կտրելու համար:

Կրաս. — Ոչ թէ կրունկիդ, այլ հոգւոյդ վրայ, դառնածանտ Հրեայ, կը սրես դանակդ: Ոչ մի մետաղ, ոչ ալ դահճին թուրն հատու է՝ սաստկա-համ չարութեանդ կիսոյն չափ: Ոչ մի պաղատանք չը թափանցեր ներսդ:

Շայլ. — Ոչ մի պաղատանք զոր քու միտքդ կարենայ յերկրել:

Կրաս. — Ո՛հ, նզովեալ ըլլաս, անըզգամ շուն, և արդարութիւնն ամբաստանուի կենացդ համար: Դու ուժգնապէս կը մտրեցնես զիս հաւատքիս մէջ, Պիթակորի կարծեաց հաւատալու համար, թէ անասնոց հոգիներն մարդկային մարմնոց մէջ կը մտնեն: Քո այդ շուն հոգին առաջ կ'ապրէր մի գայլի մորթի մէջ որ կ'ախուցեալ հոսկ յետոյ մարդասպանութեան եղեւով մի: Իւր գազանակերպ հոգին փախչելով կ'ախաղանէն ի քեզ սողոսկեցաւ՝ տակաւին հեթանոս մօրդ արգանդին մէջ. զի քու այդ փախաղանքներ, արիւնախանձ, սովալլուկ և գիշատիչ գայլի փախաղանքներ են:

Շայլ. — Քանի որ ծաղրաբանութիւնքդ չեն կարող ջնջել մուրհակիս ստորագրութիւնը, այդպէս բարձր խօսելով, մի միայն թողերդ կը ցաւցնես. մտացդ դարման տար, բարի գաւազ, թէ ոչ անդարմանելի անկման մը մէջ պիտի գլորի: Ես իրաւունքս կը պահանջեմ այստեղ:

Թարգմ. Ա. ՀԱՄԲԱՐԿԱՅԹԱՆ

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՑՆԵՐ Ի ՓՈՔՐ ԱՍԻԱ

Սոյն վերնագրով Գ. Ա. Պասխաղի-դիս՝ Եվդոմաս անուն հանդիսին մէջ յօդուած մը գրած է Պոնտոս բնակող Յոյներու վրայ որք հայերէն կը խօսին: Այդ յօդուածին գլխաւոր մասանց թարգմանութիւնը բանասիրի մը կողմանէ մեզ զրկուած լինելով, ի ստորեւ կը հրատարակեմք:

«Պոնտոսի երկու անուն ունի. մին Պոնտիօ, միւսը Սարաճլը-Իւսթիւ. առջի անունը քրիստոնեայք կը գործածեն, վասն զի այս տեղի բնակիչք կ'երեւի թէ

Ակնայ համանուն գիւղաքաղաքէն պանդըխտած են. իսկ թուրքերը Սարաճլը-Իւսթիւ կ'ըսեն, ո՛չ հեռու գտնուող Սարաճլը անուն գիւղին անուամբ: Վերջին անունը պաշտօնական է:

Բիւթանիոյ մէջ կը գտնուի Սարաճլը-Իւսթիւն, Կէյվէյի Յուստիանեան կամուրջէն քիչ հեռու, ուր կը գտնուի Էնկիւրիւ-Կ. Պօլսոյ երկաթուղոյն կայարանը. ձիով երկու ժամ:

Բնակչաց թիւը՝ 450 տունի կը հասնի, 250ը քրիստոնեայ և 200ը թուրք: Մէն մի ընտանիքի հայր առնուազն վեց զաւակ ունի, որով ընտանիքը ութ հոգիէ կը բաղկանայ: Քիչ չեն տուներ՝ ուր հայրը կը բնակի իւր երեք կամ չորս ամուսնացեալ զաւակներով. եթէ թուներն ալ հաշուի դնենք, ընտանիքին թիւը 20էն 30ի կը հասնի:

Պօսուած լեզուն՝ թուրքերունը տաճկերէն է, քրիստոնէիցը՝ հայերէն: Ձեզմէ շատեր անշուշտ՝ թուրքերէն, ալապներէն և վլախերէն խօսող յոյներ կը ճանչնաք, այլ հայախօս յոյներ կարելի է չէիք ճանչնար: Այլ սակայն կան ասոնք և քիչ ալ չեն. Հայ-Հոռոմներ կը կոչուին սոքա, և կը գտնուին Ակնայ գաւառին մէջ, ինչպէս նաև Պոնտիօ, Օրթաքէօյ և Ֆընտըղլը ի Բիւթանիոս: Քրիստոնեայք ըսի, բայց Յոյներս ըսել կ'ուզեմ, զի անշուշտ Հայք ալ քրիստոնեայ են: Այժմ, հասկնալու համար թէ՛ օրթոտքս յոյն լինելով, ի՞նչպէս կարելի է որ հայերէն խօսին, պէտք է աւանդութեան դիմեմ, քանի որ գրաւոր պատմութիւն չկայ: Ուրեմն, ըստ աւանդութեան, Պոնտիօյի, Օրթաքէօյի և Ֆընտըղլըյի Հայ-Հոռոմք՝ Ակնէն գաղթած են, 240 տարի առաջ, որոյ շարժառիթը անյայտ է: Եւ ստույգ է որ հոնկէ գաղթած լինին, ինչու որ Պոնտի և Ակ-Կրակ անունները, զորս Օրթաքէօյի ծերք այժմիկ ալ կը գործածեն, ինչպէս նաև Ֆընտըղլը անունը, անուններ են որք յԱկն եւս կը գտնուին, ինչպէս նաև Ակ (ag) անունը զոր Սրբոյն Գէորգոյ եկեղեցւոյն մէջ գտնուող աւազանին կուտան: Ասոնց լեզուն՝ Ակնայ Հայ-Հոռոմներու լեզուն շատ կը նմանի, ուրեմն պէտք է որ այս վերջինները քննութեան ենթարկենք: Ակնայ Հայ-Հոռոմներու մասին երեք կարծիք կայ. մին թէ՛ ասոնք ժամանակին Հայ ծագումն ունեցած, և օրթոտքս և լուսաւորչեան⁽¹⁾ եկեղեցեաց

(1) Լուսաւորչեան եկեղեցի անուամբ եկեղեցի չեմք գիտեր. եթէ մեր եկեղեցին կ'ակնարկէ Եվդոմասի աշխատանքը, մեր եկեղեցին «Հայոց եկեղեցի» կամ «Հայաստանեայց եկեղեցի» է և ոչ «Լուսաւորչեան»:

Ծ. ԽՄԲ.

բոժանման ժամանակ, օրթոտքս եկեղեցւոյն հաւատարիմ մնացած են՝ Արիօսի չհետեւելով⁽²⁾, և Բիւզանդիայէն եկող օրթոտքս քահանայներով հովուեցան, յունարէն պատարագելով և յունարէն լեզուն գործածելով, այնպէս որ վերջը յունացան. ինչպէս որ Պոնտաք, Սերպիացիք և Բուսանք զիրենք Հելլէն կը կոչէին ասկէ քիչ առաջ: Այնպէս որ, եթէ մէկը զիրենք Հայ կոչէ այսօր, իսպառ պիտի մերժեն Հայոթիւնը: Ինչու որ, իրենց վարքն ու բարք, սրտերն և ամենայն ինչ Հելլէնացած են:

Երկրորդ կարծիքը սա է թէ՛ սոքա Յոյն էին, մնացորդք Քսենեփոնի կամ Մեծն-Աղէքսանդրի զօրաց, որք Հայ կրներ առնելով հոն հաստատուեցան:

Երրորդ և վերջին կարծիքը սա է թէ ասոնք Յունաստանի Եգեայէն են, որմէ՛ Էկին անունը:

Ձանց կ'առնում ապացուցանել այս կարծեաց ո՞ր մէկուն ճիշդ լինելը, զի դա կարողութենէս վեր է:

Ընդհանրապէս կը պարապին շերամաբուծութեամբ. իւրաքանչիւրը թըթենիի պարտէզ մ'ունի:

Պօսուած լեզուն Հայերէնն է ըսինք: Սակայն յունարէն կը բարեւեղիւրար. օրինակ. «Կալիմէրա, կալիպէրա» և երբեմն խառն ի խառն յունարէն բառեր կը գործածեն: Այլ սակայն Հայոց խօսած լեզուէն ալ շատ կը տարբերի, այնպէս որ բնագաւառի Հայ մը՝ ասոնց լեզուէն բան մը չպիտի հասկընայ: Լեզուի սոյն տարբերութիւնը բուն Հայերէնէն, ինչպէս նաև իրենց բարք ու վարք, որք Հայոց բարքերն շատ կը տարբերին, յոյց կուտան թէ, Հայ-Հոռոմներու ծագումն բնաւ հայկական չէ, կարծիք որ բոլորովին մերժելի և սուտ է:

Արծաթի նմանութիւն յառաջ կը բերեն հետեւեալ խառնուրդք.

1⁰ Պղինձ՝ 100 մաս, Նիքէլ՝ 70 մաս,

Վոլֆրամ՝ 5 մաս, Ալումինիօմ՝ 1 մաս:

2⁰ Անագ՝ 10 մաս, Նիքէլ՝ 7 մաս,

Պղինձ՝ 7 մաս, Քօպալթ՝ 3 մաս:

3⁰ Անագ՝ 87 1/2 մաս, Նիքէլ՝ 5 1/2 մաս,

Անթիմոնէն՝ 5 մաս, Պղինձ՝ 2 մաս:

(2) Շատ զարմանալի է որ զՀայս Արիօսի հետեւող՝ կարծելու աստիճան տգէտ և նախապաշարեալ մարդիկ յաւակնութիւն կ'ունենան՝ յունական հանգէսներու մէջ գրական հրապարակը նետուելով, ուսումնասիրութիւններ հրատարակելու բանասիրական նիւթոց վրայ: Աւելի ցաւալին այն է որ Եվդոմասի խմբագիրն հրատարակած է այդ այլանդակութիւնն՝ առանց ուղղելու, որով կասկած տուած է թէ ինքն ալ այնպէս հաւատացած է: Ծ. ԽՄԲ.

ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ

Թէ ի՛նչ բարոյակամ հանգամանքներ կը
պահանջուին վարժապետէն

Ա.

Ապառաժուտ լեռներով շրջապատեալ հայաբնակ աւանի մը զաւակն էր Բարթող. անհուն եռանդ ունէր ուսանելու. 13 տարեկան էր երբ ծխական վարժարանի ընթացքն աւարտեց: Անորոշ բնազդով մը կը սիրէր, բուռն կը սիրէր ամէն ինչ որ վերաբերութիւն ունէին իւր վարժապետին, իւր վարժատունին: Վարժապետն՝ անոր համար՝ ամենէն մեծ մարդն էր աւանին, և դպրոցը՝ որ եկեղեցւոյ բարձր զանգակատան ներքեւ ամփոփած էր թեւերը, հայրենի տանը չափ խորին հրապոյր կ'ազդէր նմա այն կենդանութեամբ որ կ'եռար կը զեռար հոն: Հո՛ն, յաւէտ հոն ապրիլ կ'ուզէր, այն շրջափակին մէջ. և հոն թաղուիլն իւր երազն էր, վարժատան պարտիզի շուքերուն տակ, եկեղեցւոյ կուշտը՝ մշտհոս աղբիւրի կարկաչին ի լուր, սիրուն յարափթիթ մանկութեան բարեպաշտ մեղեդիներով, ուսումնաստեան միմունջներով ու զուարթ ազմուկներով օրօրուն: Վարժապետութեան կ'ընդունէր էր որ տակաւ կը զարթնուր ի նմա: Դեռ մատաղատի՝ աւանին ամէն բնակչաց ծանօթ եղած էր արդէն՝ դպրոցի հանդէսներէն ուր առաջին մրցանակ միշտ կ'ստանար, և եկեղեցւոյ դասէն ուր ա՛յնքան քաղցրանուագ կ'երգէր թրթռուն շեշտերով, սրբազան հեղինակաց հոգեկան ներշնչմամբ համակուած, ու բարեպաշտ ժողովրդեան ի լուր՝ միսքիկ աշխարհի մը բոլոր հրապոյրները պարզելով:

Իւր ձիրքերով ու բարեհամբոյր վարքով աւանի ժողովրդեան համակրանքը գրաւած էր Բարթող: Օր մը Թաղական խորհուրդը կարեւոր որոշում մը տուաւ, և յաջորդ կիւրակէն եկեղեցւոյ բեմէն քահանայն ծանոյց թէ Պարոն Բարթող օգնական տրուած էր վարժապետին: Սեղանին ետեւէն մտիկ ըրած էր Բարթող ծանուցումը և արտասուած էր: Այդ կիւրակէն ամէնուն խօսակցութեան առարկայն դարձաւ պաշտօնական որոշումն, և ամէնն ալ գոհ էին անկէ:

Աղջկան պէս ամօթխած՝ մաքուր ու փափուկ հայերէն մը կը խօսէր Բարթող. իւր ոճը՝ որ բնատուր հանգամանք ունէր՝ պարզ ու բնական էր: Սահուն գեղեցիկ գիր ունէր, շատ լաւ թուրքերէն կը կարդար թէ ձեռագիր լինէր և թէ տպագիր. բառարանի մը օգնութեամբ բաւական կը հասկնար ֆրան-

սերէնը: Աշխարհագրութեան, պատմութեան ու թուաբանութեան ծանօթ էր գրեթէ իւր վարժապետին չափ:

Սկսաւ ուրեմն պատշոնալիւրէ:

Երկու տարիէն փոքր գումար մը խնայած էր:

* *

Բ.

Աւանի ամպածրար լեռանց գագաթէն ձեան վերջին հետքերն հալած անհետացած էին. մանիչակն արթնցած էր խոտերու տակէն, ջրադացներու մէջ կենդանութիւն բերած էր Գարունն իւր հետ:

Լուսնակ գիշեր մ'էր. անծանօթ կերպարանօք պատանի մը՝ ծրար մը թեւին տակ՝ աւանին ամայի փողոցներէն ստուերի պէս կը սահէր կ'անցնէր ոլորապտոյտ. և ահա Ս. Թագաւոր եկեղեցւոյ դրան առջեւ կանգ կ'առնու պատանին. իւր ուխտը կ'ընէ հոն, ուխտ անձնուրացութեան. ջերմեռանդ կ'աղօթէ՝ ծնրագիր սալարկի քարերուն վրայ, և արտասուաց հեղեղով՝ որ սըրտէն կը բլլիւր աւելի քան աչերէն՝ կը նուիրագործէ ուխտը: Յետոյ ոտք կ'ընէ ու հապճեպով կը հեռանայ, աւանն ի վար կ'իջնէ, թեթևոտն կ'անցնի գետէն, և արեւելեան զառիվայրի ժայռուտներուն մէջ անյայտ կը լինի քիչ ատենէն:

Հետեւեալ առաւօտուն՝ ժամերգութեան պահուն, բացակայ էր Բարթող:

Քահանայն իւր հասցէին նամակ մը կը գտնէ ժամագրքին մէջէն. ահա նամակին պատճէնը:

«Արժանապատու Տէր հայր, Հերիք է որքան տարի մը ամբողջ տառապեցայ խզճի խայթէս պաշտօնիս մէջ. կ'զգամ թէ խիստ անկարող եմ ըստ արժանւոյն կատարել զայն. Որչա՛ր բարձր է պաշտօնն, և որչա՛ր դեռ անարժան եմ ես. Հաց եփել ու կտաւ գործելու չը նմանիր վարժապետութիւնը. ա՛հ, տարբեր բան մ'է այն. սուրբ, առաքելակա՛ն, անձնուիրակա՛ն:

«Եթէ ոչ այսօր, անշուշտ մի օր ինձ պիտի յանձնուէր բոլորովին մեր աւանի կրթական գործը, երբ՝ վարժապետս ծերացած՝ այլ եւս անկարող լինէր պաշտօնավարելու: Ի՞նչպէս ի գլուխ պիտի հանէի այն դժուարին գործ: Ընտանեաց, եկեղեցւոյ, հասարակութեան ինձ յանձնած թանկագին աւանդն ի՞նչպէս պիտի վերադարձունէի: Աշակերտացս նիւթական, մոաւոր ու բարոյական զարգացումն ի՞նչպէս պիտի կատարէի. ի՞նչպէս զանոնք մարդ պիտի ընէի խոհուն, գործուն, առաքելի:

«Տէր հայր, ասոնք են որ երկար ա-

որոշումս տուի: Կ'երթամ վարժապետութիւն սովորիլ, դարգանալ, ուխտելով որ ինչ որ սովորիմ, դառնամ նուիրեմ յօգուտ աւանին որ զիս ծնաւ:

«Կ'աղաչեմ, միտի՛թարէ ծնողքս, և աղօթէ ինձ համար...: Ի՛ԱՐԹՈՂ»

Բարի տէրտէրը առանց զարմանալու չկրցաւ կարդալ նամակը: Յետոյ կարդաց զայն վարժապետին, կարդաց ծննդացն ու պաշտօնական մարմնոց: Ամէնն ալ զարմացան:

* *

Գ.

Երեք օրուան ճանապարհ հետիտն ընելով կարաւանի մը ընկերակցութեամբ, Բարթող կ'իջնէ Սև ծովու նաւահանգիստներէն մին. առաւօտուն կը հասնի. երեկոյին կը մտնէ շոգենաւ: Չորս օրէն Պօլիս ժամանած էր:

Փնտռած գտած էր հայրենակիցներու օթեանը: Յերեկներն անյայտ կը լինէր, միայն գիշերները կ'անցունէր հայրենակցացը քով. ո՛չ ոք գիտէր թէ ինչով կ'զբաղէր. «Ուրհրդաւոր տղայ» կը կոչէին զանի. և արդարեւ, խորհրդաւոր խօսքերով կը պատասխանէր այն ամէն հարցմանց զորս հայրենակիցները կ'ընէին նմա:

Երեկոյ մը շատ ուրախ վերադարձաւ Բարթող օթեան. ա՛յն ատեն միայն հայրենակցացն յայտնեց նպատակն, ու հազորդեց յաջողութիւնը:

Նոյն ժամանակի Պատրիարքը մասնաւոր կարեկցութեամբ կը գուրգուրար այն գաւառացի պատանեաց վրայ որք կրթութիւն խնդրանօք կը դիմէին իրեն:

Բարթող՝ այդ պատանիներէն մին՝ խնդրած էր մտնել Շահնազարեան վարժարանը:

Գոհացուցիչ քննութիւն անցուցած և ընդունուած էր:

* *

Դ.

Խառնուելով այն տոտենները՝ Թրքահայոց Աթէնքը դարձած էր ի շնորհս Շահնազարեան վարժարանին որ կը ծաղկէր՝ արթուն ձեռնհաս Տեսչի մը ձեռաց տակ՝ ուսուցչական ընտիր մարմնոյ մը օժանդակութեամբ:

Ամէն գաւառներէ այն յարկին տակ հաւաքուած պատանիներ՝ որք ա՛յնքան կը տարբերէին իրարմ բարքով ու բարբառով, ընդհանուր եղբայրութիւն մը գոգցես հաստատած էին հոն, եղբայրակցութիւն որ գրգանոյլ անշահասէր ոգիէ մը ներշնչուած էր աւելի քան աշխարհային գժուձ հաշիւներէ: Եւ ա-

մէնը մէկ բարոյական քաղցր կապով մը միացեալ կ'զգային զինքեանս Տեսչին ու վարժապետաց հետ :

Բազմակողմանի զարգացման նպատակով միջավայրի մը ամէն առաւելութիւնները կը վայելէր Բարձր: Գեղեցիկ դպրութիւնք և գիտութիւնք հաստատարուէս կը մշակուէին Շահնապարեան վարժարանին մէջ, և ինքն մին էր այն փայտեան դռներէն որք անշաղկապ կը լայնէին դաս ու դասագիրք: Պարապոյ ժամերուն երկրագունտին համար կը թարգմանէր մանկավարժական յօդուածներ զորս Տեսուչն, ինք, նախապէս կ'որոշէր մեծ հաճոյքով, ու յետոյ, նախ քան հրատարակութիւնն՝ աչքէ կ'անցունէր զանոնք:

Վարժապետութեան համար ունեցած բնազդն արդէն փոխուած էր գիտակցութեան. և հիմա՝ կարող ձեռքի մը ուղղութեամբ՝ մաս առ մաս կը կազմէր մտայնը մէջ մանկավարժական գիտութիւնը:

Իսկ մանկավարժն, հաստատարող օրինակ՝ հոն, իւր աչաց առջին էր ամէն օր. անոր գործունէութեան ի դէտ կը բարձրանար, կ'ազնուանար իտէպէն զոր մինչև այն ատեն այլ և այլ պատահական պարագայից բերմամբ կազմած էր վարժապետի բարոյական հանգամանաց մասին: Իւր մանկութեան վարժապետը՝ աւանին ամենէն մեծ մարդը՝ կը նոյնանար աչացն առջև, թէ և կը մնար միշտ յարգելի իրեն համար. իսկ Տեսուչն կը դառնար օր քան զօր ո՛չ միայն յարգելի, այլ և պաշտելի անձնաւորութիւն:

Ինչ արքնութիւն, ինչ եռանդ և որպիսի հզօր հեղինակութիւն:

Գիշերն երբ պատահէր որ աշակերտ մը աչքը բանար անկողնոյն մէջ, իւր գլխուն վերև կանգնած կը տեսնէր Տեսուչը, զինով՝ պրպտով՝ անխոնջ տեսուչը. դասարանաց մէջ ուսուցիչ և աշակերտ չգիտէին թէ ո՛ր ծերպէն կը գիտէ զիրենք. ամենուրեք էր նա. ամէն բանի տեղեակ, յանգէտս ուսանողաց: Աշակերտաց երբ հարկ լինէր տեսուչը տեսնել՝ գրասենեկին մէջ կը գտնէին զանի, գրքերէ, թղթերէ շրջապատեալ, գրասենեկին առջև միշտ ի գործ: Մեծ ուրախութեան ժամ մը կը դառնար ուսանողաց համար այն ժամն, երբ գիրք մը կամ թղթի կտոր մը ի ձեռին՝ Տեսուչը կը մտնէր դասարան դաս տալու: Բնաւորութեան անվրդով խտուութիւնը՝ դաշն խօսից ու վարմանը մէջ կը քաղցրանար կը լուծուէր. հպարտ, վէս երևոյթն մանկային զուարթութիւն մը կ'ստանար և դասարանը կը լեցուէր ոգևորութեամբ, բայց ո՛չ անկարգութեամբ: Մասնա-

ւոր հրապոյր մը կ'ազդէր իւր դասն ուսանողաց, որք մասնաւոր նշանակով կը պատրաստէին զայն:

Ի դէպ կամ յանդէպ որոշումներ չէր ընէր, հրամաններ չէր տար ո՛չ մէկուն, իսկ երբ տար՝ անդառնալի կը լինէին անոնք. դպրոցին մէջ ամէն ոք գիտէր զայս. ուստի ըստ այնմ կը վարուէին:

Ներքին պաշտօնեայնէրէն մին օր մը աղայ մը ծեծած էր չարաշար: Տեսուչը կ'արձակէ պաշտօնեայն. ասոր պաշտօնակիցը մի քանի օր կը պահեն զանի վարժարանին մէջ Տեսուչէն անտես: Ասուտ մը մինչ գրասենեկէն դուրս կ'ենէր Տեսուչն, պաշտապահին ծնրագիր կ'ազդէր իրեն արձակեալը որ ներքէ և ընդունի զինք դարձեալ. «Գնա՛, կը գոչէ Տեսուչն ցտամամբ. գնա՛, ի՞նչ պէ՛տ է կրնաս դաստիարակութիւն ընել. դո՛ւ օր կ'ստորնաս մինչև ծուր գնել առջևս, ի՞նչ բարոյական կրնան սպասել քեզմէ՛ աշակերտք»:

(Շարունակելի) Գ. Ա. ՄԱԼԱՅԵԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Ն Ո Ւ Պ Ա Ր Ե Ա Ն

ԲԱՌԱՐԱՆ

ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

(Պաղատապեան Տպագրութիւն)

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ սոյն ընդարձակ բառարան, այնչափ գովեստիւք գնահատեալ շատ մը ձեռնհաս անձերէ, աւարտած է բոլորովին:

Իւր ճոխագոյն պարունակութեամբ, հայերէն համանշանակներու ճշգրտութեամբ, շատ մը նորուիք և դաւառական բառերով և ճշգրտաբեք՝ բողմաշատ հեղինակին սոյն երկն անհրաժեշտ գործի մ'է թէ՛ թարգմանաց, թէ՛ ուսանողաց, և թէ՛ առ հասարակ ամէն անոնց որք կ'զբաղին Փրանսերէն լեզուով:

Փրանսերէնի մէջ գործածական բոլոր բառերն, ոճերն ու ասացուածներն հաւաքելով, և դնելով անոնց ամէնուն ալ ճշգրագոյն նշանակութիւնները, զանազան առումներն և համապատասխան հայերէն նշանակութիւններն, ի հարկին թուրքերէններն ևս, Նուարեան էֆէնտի յօրինած է շատ հարուստ, շատ կատարեալ գործ մը, արդիւնք երկարժամանակեայ աշխատութեանց, անդուլտութեանց և խղճամիտ ու իմաստուն հետազոտութեանց:

Գործոյն կարեւորութեան կը համապատասխանէ նաև տպագրութիւնն, որ Պաղատապեան տպարանի խնամեալ արտագրութեանց մին է և կը կազմէ ըստուար և գեղեցիկ հատոր մը, ճոխա-

գոյն մատենադարանաց մէջ ընտիր տեղ մը գրաւելու արժանի:

Մինչև յառաջիկայ յունուար 20, որոշուած է անփոփոխ պահել Նուարեան Բառարանին գինը, 20 ֆրանք:

Գուտաներէն ուղղները պէտք է գիտեն «Մաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին. Փօստի ծախուց համար ծովեղերեայ քաղաքներէ պէտք է զրկել 6 դր, ներքին քաղաքներէ՝ 8 դրու:

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Շիշերը մտերիւր համար պէտք է թղթի մանր կտորներ լեցնել մէջը, վերան ջուր ածել և ուժով ցողուել: Շիշին փակած նիւթերը չեն կարող դիմադրել այս պարզ լուսամասն. կրնայ գործածուիլ նաև ապակեխոտ (եֆէշ-շա), որ ապակիէ, թիթեղէ, զինկէ և խեցեղէն ամանները մաքրելու յատկութիւնն ունի. — Հին շիշերը կրնան մաքրուիլ նաև՝ մէջը ջուր և քիչ մ'աւաղ լեցնելով և զօրաւոր կերպով ցողուելով. — կրնայ գործածուիլ նաև փայտի սղոցածք (պէֆեր Բեշ), սակայն ջուրը քիչ գնելու է, որպէս զի սղոցածքը լաւ չփոխի շիշին հետ. — Զգուշանալու է կապարի տապով շիշերը մաքրելէ, վասն զի յաճախ մի քանի աւաղ կը մնան շիշին մէջ, մանաւանդ տափաբակ յատակ չունեցող շիշերու մէջ, և այսպէս թունաւորմանց տեղի կուտան: — Շիշերը կը մաքրուին նաև մէկ լիտր ջրոյ մէջ 25 կրամ բլեխ-պը լուծելով, և այս լուծուածք երկու կամ երեք օր շիշերուն մէջ պահելով: Բլեխ-պը չի տեղ կրնայ գործածուիլ նաև մէկ մաս ասէր Բլեխ-պէ և երեք մաս ջուր: Երկու պարագային մէջ ալ, պէտք է յետոյ մաքուր ջրով ցողուել շիշերը: — Իւզոտ շիշերը կը մաքրուին քիչ մը աւանաով (սոս), յետոյ փայտի սղոցածքով: — Իրգալ մը փոխացած մանանեխ խով (հարալ) և քիչ մը ջրով, հին շիշերու մէջէ կարելի է ջնջել ամէն տեսակ հոտ:

Լաւ մաքրելու համար պէտք է զգուշանալ, սեղանէն ելնելէ անմիջապէս յետոյ, աշխատութեան սկսիլ, մանաւանդ մոտաւոր աշխատութեան:

Նարնջի կեղեւներով կարելի է պատրաստել զօրացուցիչ դեղ մը, իրար խառնելով և մի և նոյն ժամանակ լեցնելով (եֆէշ) 5 կրամ թարմ նարնջի կեղեւ խարտուած և 15 կրամ շաքարի աւաղ: Ճաշէն առաջ պէտք է առնել 1/2 մինչև 4 սուրճի դրգալ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգոնարարություն. — Գոնեայի Այստիլիսի գաղափարներն աշխարհում անուանեցաւ Էստա Էֆիսոսի, գայմա-գամ Խաթիմ գաղափարներն, և իրեն յա-ջորդեց Ահմէտ Շաքիր պէյ, գայմա-գամ Այստիլիսի:

Պատգոնարար. — Արաքսիսի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Ռուսիոյ Կայսեր արքունեաց նախարար Կոնստանտինով Տաշկովի: — Ա. Կարգի Օսմանիյէ՝ Բարլ Անթուան Գոն Զոհնադուլըն իշխանին: — Ա. Կարգի Մէհմետիյէ՝ Թափրեան (Խրիմ) նահանգին կուսակալ և պետական խորհրդոյ անդամ Պ. Լազարովի: — Բ. Կարգի Օսմանիյէ՝ Ռուսիոյ Կայսեր Լիւստիայի պալատան հրամանատար Ալբրեխտ զորավարին և Ռուսիոյ Կայսեր արքունեաց անուանեցաւ և պետական խորհրդոյ անդամ Պ. Քոպլեյի: — Այլ և այլ Կարգի պատուանշանք՝ Ռուսիոյ արքունեաց և այլ պաշտօնէից անանց: — Ա. Կարգի Շէֆազաթ՝ Ռուսիոյ Կայսեր արքունեաց նախարար Կոնստանտինով Տաշկով կոմսին կնոջ: — Գ. Կարգի Շէֆազաթ՝ Էստրոնիս և Ռուսական ընդհանուր հիւպատոս Պ. Լիշինի կնոջ և մայրաքաղաքիս Ռուսական դեսպանատան Բ. Թարգոմանին կնոջ: — Բ. Կարգի Օսմանիյէ՝ Իշ Իլի (Աստանա) կառավարիչ Պէշէնգէ փաշայի: — Գ. Կարգի Օսմանիյէ՝ զերմանական դեսպանատան պահակ շոքենաւին հրամանատար Մոլթը կոմսին: — Գ. Կարգի Օսմանիյէ՝ նոյն դեսպանատան զինուորական կցորդ Պ. Անտրէի և Թարգոման Պ. Գոն Էքարգի:

Աստիլիս. — Սանիյէի Բ. աստի-ճան տրուեցաւ Բ. զորաբանակին փոխ-հրամանատարին քարտուղար Մուսթաֆա Ֆէհմի Էֆէնտիի և Զմիւռնիոյ ներքին և արտաքին ապրանքներու մաքսատանց հաշուակալութեան Ա. քարտուղար Տանիլ պէյի: — Բաղիսի աստիճան՝ Զմիւռնիոյ մաքսային տեսչութեան թղթակցութեանց Ա. քարտուղար Նուրի պէյի և տեղւոյն ներքին և արտաքին ապրանքներու մաքսատանց թղթակցութեանց Ա. քարտուղար Շէֆիք պէյի:

— Սպիսակ արծիւ Պատուանշանին Ա. աստիճանը Սերպիոյ կառավարութեան նախարար Էստա Էֆիսոսի:

— Վանայ Գոր կուսակալ Ֆէրիք Պահրի փաշա այսօր իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի:

— Ի Գորոյ վարժարան հաստատուել և կամ չենք մը վարժարանի վերածել այսուհետեւ՝ առանց պաշտօնական ար-

տօնութեան թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ ամբողջ Թուրքիոյ մէջ, բացարձակ կերպիւ արգելուած է: Ասկից առաջ առանց արտօնութեան բացառած վարժարանաց համար մէկ ու կէս ամիս պայմանաժամ տրուած է՝ կրթական նախարարութեան զիմեով արտօնութիւն ստանալու համար: Այդ պայմանաժամին յետոյ պիտի փակուին արտօնութիւն չունեցող վարժարանք, և եթէ օրինաց հակառակը գործողներ գտնուին, անոնց նկատմամբ օրինաց տրամադրութիւնն ի գործ պիտի դրուի:

— Տրապիզոնի նահանգին եզրուորացորդներ արտածուին արգելուած է: Դիւրութիւններ պիտի ընծայուին սակայն այն վաճառականաց որոնք պայմանագրեր կնքած էին այս արգելքէն առաջ:

— 200 սակի վրկուած է Ելեւստանի նախարարութեան ի Զիլիպէ, բաշխուելու համար այն աղքատ իսլամ գաղթականաց որք մզկիթներու և մշտրէսէներու մէջ կը բնակին: Վեհ. Սուլթանը անցեալ տարւոյ նման այս տարի ևս այս նպատակաւ 300 սակի շնորհած է Իւր անձնական Գանձին:

— Մաւրիտիոսի ցուցանանքներն համար Կայս. Թանգարանին անօրէն Համտի պէյ երկու նկարներ կը պատրաստէ որք ցոյց պիտի ցան արարական ճարտարապետութեան ճաշակաւ շինուած երկու շէնքեր, որոց մին մզկիթի մը ներքին մասը: Գեղարուեստից վարժարանի ուսուցիչներէն Պ. Վալորի ևս կը պատրաստէ նկար մը:

— Հոսովայ Պապր մոտադիր է եղեր նոր և աւելի աղքեցիկ կարեւորութիւն մը տալ Կ. Պոլսոյ պապական նուիրակին և ընդարձակել կաթոլիկութեան աղքեցութիւնն յարեւել:

— Այսրնի կուսակալ Ապրիլրահման փաշա՝ քննական պապոս մը կատարելու համար ի մօտոյ պիտի այցելէ եղեր Մաղնիսայի և Այսրնի գաղափարները:

— Թուրքիայէն ի Ֆրանսա ներմուծուելիք գինիներէն և չամիչներէն փետր. Այն սկսեալ հնգապատիկ մաքս պիտի առնուի:

— Կարմոյ Գահանգին ոստիկանաց թուոյն վրայ վեց եօթը ոստիկանք աւելցուած են: — Ներքին գործոց նախարարութիւնը հրամայեց է Կարմոյ կուսակալութեան որ պարսկահայատակ խոյլի Իսմայէլի ու Ալիի սպանութեան հեղինակներն անմիջապէս ձերբակալուելով, իրենց օրինական պատիժը կրեն:

— Մայրաքաղաքիս կաթոլիկները ԲՍ. Կաթոլիկ լրագրին միջոցաւ պապական նուիրակ Տ. Պոնէթիէ խնդրած լինելով որ յառաջիկայ մեծ պահոց մէջ

պահքէ և ծոմապահութենէ ազատ կացուցանէ զիրենք Էնֆուէնցային պատճառաւ, նոյն լրագրիւ կը ծանուցանէ այժմ թէ Հոսովայ Պապի թոյլ տուած է որ կաթոլիկները վայելեն այդ ազատութիւնը ոչ միայն մեծ պահոց միջոցին, այլ որքան ժամանակ որ Էնֆուէնցան չարուհակէ:

— Դիւանագիտական վարժարանի պիտի վերածուի ի Պէլիթաշ արքունի կալուածոց յարմար մէկ մասը որ տրուէն կահաւորուած է 60,000 զրէ ծախքով: Միւլքիյէ և Սուլթանիյէ վարժարաններէն առաջին միջանակ ստացող և ամենէն կարող չընտնաւորաներէն տառնական հոգի այս վարժարանը պիտի ընդունուին և երեք տարւոյ չընտն մը բոլորելէ յետոյ վկայական պիտի ստանան: Սոքա պիտի պաշտօնավարեն մանաւանդ օտար մայրաքաղաքաց Օսմ. դեսպանատանց մէջ:

— 100,000 Ֆրանքի դուար մը յատկացուած է Կ. Պոլսոյ ֆրանսական հիւանդանոցին՝ ի Բարիկ տեղի ունեցած ձիարշախ մը հասոյթէն:

— Այսրնի Գահանգին երկրագործական քննիչ Պէլեան Էֆէնտիի աստիճարութեամբ, Արեւտական և երկրագործական նախարարութիւնն հարկ եղած հրամանները տուած է՝ Քըզըլ-Թուրաքի տնկարանէն արտադրեալ 2005-ի 250 հազար ամերիկեան որթատուէկեր զընելու նահանգին այդեղանաց տրամադրութեան ներքեւ որոց այդիները որթալուծէ փճացած են: Որթատնից մէջէն այն տեսակները պիտի ընտրուին որոնք կրնան տակալ որթալուծի աւերմանց և նահանգին կլիմային ոտանիկ ջերմութեան:

— Մաւսուլլահ Սուհամի և ընկերութիւնն արտօնութիւն ստացած է Զիքալոյի ցուցահանդիսին պալատան մէջ 2000 սակի ծախքով կառուցանել մեծ տաղաւար մը՝ նման այն աղբիւրին որ կը գտնուի Թուր-Գարու պալատան մօտ: Տաղաւարին երկայնութիւնը և լայնութիւնը պիտի լինին 20 ական մէթը: Սուհամի ընկերութեան պիտի պատկանին անդ ի տես դրուած նիւթերը՝ յետ փակման Յուցահանդիսին, ուր զրկուած օսմանեան նիւթերն, ինչպէս նաեւ չծախուելով ետ բերուածներն, մաքսէ ազատ պիտի մնան: Յուցահանդէսի գացողները հարկ եղած զիւրութիւնները պիտի ստանան անցագրի մասին: Յուցահանդիսին Օսմ. ճիւղին մէջ Սուհամի ընկերութիւնը պիտի կանգնէ յիշատակարան մը՝ ներկայացնող Պոլսոյ ձիարձակարանին միակըսուր յիշատակարանը: Ընկերութիւնը կայս. կառավարութեան կողմանէ որոշելի տուրք մը պիտի առնէ՝ նոյն տա-

ղաւարին յատուկ մասին մէջ գրուած ապրանքներէն:

— Սղերդի նախնական դատարանին որոշմամբ և վճռարեկ ատենին վաւերացմամբ, ութ ամսոյ բանտարկութեան և հինգ տարւոյ պաշտօնազրկութեան դատապարտուած է էրսօ գաւառակին նախնական դատարանին անդամ Հաճի Եագուպ էֆէնտի:

— Հայոց եկեղեցեաց և բարեգործական հաստատութեանց «միւսթէսնա» կոչուած բացառիկ Վազֆներուն «ինթիգալ» և «Ֆէրադ» ժառանգութեան ու փոխանցման գործողութիւնը մինչեւ ցարդ կը կատարուէին այն եկեղեցւոյ թաղական խորհրդարանաց մէջ, որոց Վազֆին կը վերաբերին այս կալուածք: Արդ, Հայոց Պատրիարքը, կ'ըսէ Թարիգ, Արդարութեան և Կրօնական գործոց նախարարութեան ղեկուցած լինելով որ այսօրինակ ձեւակերպութիւն մը գործողութեանց կանոնադրութեան խախտմամբ կը լինի և տեղի կուտայ դժուարութեանց ու գանգատանաց, յանձնարարած է որ յիշեալ Վազֆներու ժառանգման ու փոխանցման գործողութեանց վրայ թաղապետութեանց կողմէ տրուելիք արտօնագիրք այսուհետեւ ուղղակի Պատրիարքարան ղրկուին, և այս մասին պէտք եղած հրահանգները տրուին Քաղաքապետութեան: Այս առաջարկ յիշեալ նախարարութեան կողմանէ մատուցուած է Բ. Դրան ուղադրութեան:

— Մարաշի նախնական դատարանին հարցաքննիչ դատաւոր կարգուած է Րիֆաթ էֆէնտի, հարցաքննիչ դատաւոր նախնական դատարանին Զօր գաւառին:

— Իրաւագիտական վարժարանի շրջանաւարտք՝ պատժական ատենաներու առջեւ դատաւարելու համար՝ պարտաւոր պիտի լինին փաստաբանութեան վկայական ստանալ ըստ օրինի:

— Իսկիւսարի ջուրի ընկերութիւնը յարմար տեղեր երկու աւազան պիտի շինէ, իւրաքանչիւրը 3,000 խորանարդ մէթր ծաւալով:

— Թուրքիոյ, մանաւանդ Ասիոյ երկաթուղեաց և այլ հանրագումար շինուածութեանց համար մենաշնորհ խնդրելու նպատակաւ «Սօսիթէ Ազիաթիք Քօնսթանդուլօն Էնտիլսթուիէլ է տը Թուալօ Բիւսլիք» անուն մեծ ընկերութիւն մը կազմուած է կ'ըսուի:

— Տասանորդի և այլ տրոց վարձակալութեան տրուելու գործին մասնակցիլ արգելեալ է Խտարէի ժողովներու անդամոց:

— Հաւիմ պէյ և Մախսուսէի վարչական խորհրդոյ նախորդ նախագահ Սախտ պէյ արտօնութիւն խնդրած են

բանեցնելու՝ Սերամայի գաւառին Լիւթան անուն տեղն իրենց գտած արծաթախառն կապարի հանքն:

— Նախարարական օրգանական մը, ուղղեալ առ կուսակալս, կը հրաւիրէ վաճառականներն ու արհեստագէտներն մասնակցիլ Զիքուկոյի ցուցահանդիսին:

— Կէլիպօլուէն 5 միւն հեռու Զինճի Պոլան անուն տեղն ամսոյս 9ին աւազի վրայ խրեր է անգլիական «Բրիւտէնք» շոգենաւը, որ Վառնայէն ցորեն բեռցած ձիւղալթար կ'երթար: Տարտանելի փրկանաւային ընկերութիւնը հետեւեալ օրը ծովուն երեսը հաներ է զայն՝ 800 ոսկւոյ փոխարինութեամբ: Շոգենաւը վտանգին ժամանակ 200 թոնօ ցորեն նետեր է ծովը:

— Նոյն տեղը տակաւին խրած կը մընայ Մախսուսէի «Ալի-Սախլ-Փաշա» շոգենաւը, որուն փրկութիւնն եւս նոյն փրկանաւային ընկերութեան պիտի առաջարկուի եղեր:

— Պրուսայի նահանգին մի քանի գաւառաց մէջ 125428 արտավար թթեանաց պարտէզներ մշակուելու են շերամաբուծութեան համար:

— Նոր ձեւ քօրիփօ մը հնարեր է Սուլթանիլ շոգենաւին Բ. հրամանատար հազարապետ Ահմէտ պէյ: Այս թօրփիտօ ինքն իրեն կը գործէ, կը շարժի և դիւրաւ կը գործածուի եղեր:

— Յէսթրէ ևս ճարակեր է էնֆլուէնցան:

— Պալսասի նահանգին ոստիկանաց թիւն և ամսաթոշակներն աւելցնել որոշուած է:

— Եղեռնադաս առեանը հաստատեց այն վճիռն որով Նշան անուն Սերաստացի մը մահուան դատապարտուած էր, ի Ղալաթիա Ֆրանքիի խանին մէջ 15 տարի առաջ Արալէրա անուն սեղանաւորը սպաննած լինելուն համար՝ դժրամը կողոպտելու մտօք:

— Էնկիլիբի ցահանգին նախնական վարժարանաց փրճակը բարւոքելու համար յանձնաժողով մը կազմուած է:

— Կ. Պոլսոյ քաղաքացի շինութեան համար՝ Բաքէ ընկերութեան մէկ շոգենաւը վրաններ և պիտոյքներ բերաւ նախընթաց օր:

— Անգառաց եւ հանգաց վարչութեան մէջ կարգ մը հիմնական բարեկարգութիւններ մոցնել որոշած է՝ Մեծ-Եպարքոսին նախագահութեան ներքեւ կազմեալ եւ մտացուցի յանձնաժողովը:

— Ի Բարիգ, Ակադեմիոյ անդամ և նշանաւոր գրագէտ Ժիւլ Սիմօնի նախագահութեամբ կազմեալ դեռատի կանանց ընկերութիւնը իւր վերջին նիստերէն միոյն մէջ որոշեր է ամէն կարելի միջոց ձեռք առնուլ՝ արգելել տա-

լու համար կարգ մը անբարոյական գըրուածոց ի լրագիրս հրատարակութիւնը: Չը կա՞ն մեր մէջ ալ պատուազգաց կիներ որ նմանօրինակ նախանձախնդրութիւն ունենան՝ յուղղութիւն հրաւիրելու համար մեր մէջ իսկ հրատարակուող վրան բաց գրուածոց պաշտպան լրագիրները: Մեր համեստասուն տիկնայք և օրիորդք միայն մէկ բանով կարող են արդարացնել իրենց լուծութիւնը այն է՝ յայտարարելով թէ չեն կարդար նոյն փողոցային լրագիրները:

— Ասիոյ երկաթուղեաց Իյնէկէօլի մասին բացումը ի մօտոյ տեղի պիտի ունենայ: Ընկերութիւնն արդէն սկսած է պատրաստել Հայտար-Փաշայէն մինչև հոն բանելիք կառախուսներուն ժամանակացոյցը:

— Գեղարուեստից վարժարանի արձանագործութեան ճիւղին աշակերտներէն Պէյլէրպէյլի Իհսան էֆէնտի, իրեն ուսուցիչ Ոսկան էֆէնտիի օգնութեամբ՝ Հանրային Պարտուց վարչութեան անդամներէն Պ. Գայեառի Խտայիայէն բերել տուած կռանիթ քարով արձան մը շինած, և այսու իւր յաջողակութիւնը հաստատած լինելով, Վեհ. Սուլթանին հրամանաւ Փարիզ պիտի ղրկուի կատարելագործուելու համար:

— Պէշիկթաշի քարոզիչ Խորէն Եպիս. Նար-Պէյ՝ Առաջնորդաց ընթացքը սահմանող կանոնադրութեան հաւաակ վարմանց մէջ գտնուած լինելով, Պատրիարքարանը հրաժարեցուցած է զինքն իւր պաշտօնէն, կ'ըսէ Սապահ, Մօնիթօն Օրիսնքայէն առնելով:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»

Ս. Յ. Ն. Գօնեա. — Ստացա՞ք «Ծաղիկ» ի 1—13 թիւերը:

Գ. Խ. Մոսկուա. — Շրջանին սկիզբէն մինչեւ ներկայ թիւը կանոնաւորապէս ղրկած եմք. միթէ չէ՞ք ստացած:

Գ. Վ. Յ. Երասաղիմ. — Այդ 10 հատը մեր յանձնարարութեամբ ղերկուած է Ձեզ իզմիրէն. Ձեր նամակ գրելէն յետոյ ստացած էք անշուշտ:

Ա. Հ. Իզմիր, Ն. Օ. Շապին-Գարահիսար, Գ. Վ. Թ. Բաբերդ. — Ղըրկեցիք:

Հ. Ի. Բաբերդ. — Նշանակուած գընոյն մէջ չէ թղթատարի ծախքն. այդքան օրինակի համար՝ ազատ կը մնաք այդ ծախքէն:

Վահագն ի Բաբերդ. — Ղրկեցէ՛ք:

Ա Ր Ժ Է Ք Դ Ի Ր Ա Մ Ո Յ					
Օսմ. լիւրան 100 ղըշ. էն					
Մէքիսիյէ	108	15	վ. Ենչոյ		102 20
Քառորդ մէքիս	107	20	Իսկուր Բօլ		89 20
Մանր մէքիս	101	40	Նարուէն		87 4
Մէթալիք	98		Գրիմից		51 10
Հինգնոց	101	40	Անգլ. լիւր		109 31
Մանէթ թղթատարամ 9 34					
Գոնսուլտէ	20	4	Բուս. Երկ.		67
Թահվիլ. Օսմ.	76	15	Թապիլիյէ		22

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

Բայց նա որով կ'ուզէր դեռատի աղջիկին իւր խօսքերը, դադարած էր զինքը լսելէ: Սապին երբ անոր կը դառնար՝ իւր կատաղի յանդիմանութիւնն ուղղելու համար նմա, տեսաւ որ նորա մարմինը իւր բովանդակ ծանրութեամբ դէպ ի առաջ խոնարհած էր և գլուխը անշարժ ինկած էր սեղանին վրայ: Տօքթէօր Թալլըվօ չէր կրցած տանիլ այն ահեղ հարուածը որ եկած էր ջախջախել միանգամայն իւր միտքն ու սիրտը: Այս սոսկալի հարուածին ազդեցութեան ներքեւ, կը խորտակուէին իւր զգացմունքն, իւր գաղափարներն, իւր հաւատքն, իւր քաջասրտութիւնը, իւր ամբողջ մտաւորական և բարոյական կեանքն: Իւր ձեռնասուն աշտկերտուհին ո՛չ միայն ընկերուհի մ'էր իրեն համար, ոչ միայն յոյժ սիրեցեալ նշանած մը, այլ նաև՝ իւր արտասովոր գեղեցկութեան մէջ տիւարն էր կարծես իւր խնամատիրական կրօնին, ի նա կը պայծառանար այս կրօնը, կը ժպտէր իրեն, կ'ուրախացէր զինքը: Տեսնելով յանկարծ որ այս սիրուն և պաշտելի գիմակին ներքեւ ճիւղաւ մը երեւան կուգար, մարեցաւ իւր մտածողութիւնը, յետոյ իւր կեանքը: Արեան համախուսութիւն մը շանթահարած էր զտօքթէօր Թալլըվօ:

Ի՞նչ անցաւ այս վայրկեանին մտքին և հոգւոյն մէջ սոյն դեռատի արարածին զոր չլիթ խնամատիրութիւն մը մարդկութենէն դուրս նետած էր: Զգիտեմք: Բայց առաջին լուսին յուզումէ մը յետոյ, երբ ձեռքին տակ առաւ ընդ միշտ սառած սիրտն՝ այն անձին որ այնքան տարիներէ ի վեր անհափ բարիք ու գգուանք շնայլած էր իրեն, ինկաւ ծունկերուն վրայ և հեծեծազին արտասուեց:

Յետոյ, յանկարծական շարժմամբ մը ոտքի ելնելով, մտածեց մի քանի վայրկեան՝ սրբելով իւր աչքերը: Յայնժամ դէպ ի քիմիական գործանոցը յառաջանալով, վերցուց գետնէն սալաքարերուն վրայ մնացած սրուակը և կաղնեփայտէ դարանին մէջ իւր տեղը դրաւ զայն: Ապա զգուշութեամբ վեր ելաւ սանդուղէն և քաշուեցաւ իւր սենեակը:

Առաւօտուն, լյսը ճգրուելուն պէս, տան մէջ անկարգ քայլերով, խառնաշփոթ աղաղակներով և գոչումներով աղմուկէն հասկցաւ թէ տխուր յայտնութիւնն եղած էր. իւր սպասուհին՝ բոլորովին խելացնոր՝ հապճեպիւ եկաւ զինքը գտնել: Սապին վազեց գնաց, և դռնին ինչ արտասուեց, թերեւս անկեղծօրէն, իւր սաշտպանին անկենդան մարմնոյն առաջ:

Տօքթէօր Ռէյմոնի որ հաստատեց թէ մահը արեան համախուսութենէ մը յառաջ եկած էր, Սապին պարզապէս ըսաւ թէ նախընթաց գիշերը գրասրահը թողած էր՝ իւր հօրեղբայրը կարի խորին և տառապազին տպաւորութեան ներքեւ որ ներգործած էր նորա վրայ տիկին տը Վօտուիգուռի մահն, առ որ ջերմ համակրութիւն մը կը տածէր: Նա ինքզինքը կը մեղադրէր, յարեց Սապին, և բարկութիւն կ'զգար, իւր անհեռատեսութեամբ մասամբ պատճառ եղած լինելուն համար սոյն դժբաղդ արկածին: Սապին զարմացած էր և մինչև իսկ նեղացած՝ զնա սոյն մտածողութեամբ կարի յուզեալ տեսնելով: Տօքթէօր Ռէյմոն համազում յայտնեց թէ, տօքթէօր Թալլըվօ՝ չափազանց աշխատութեամբ հիւժեալ և վաստակաբեկ, չէր կրցած գիմադրել բուռն վշտի մը յառաջ բերած սաստիկ և յանկարծական յուզման: Գուռաին մէջ ճիշդ այս ձևով տարածուեցաւ եղելութիւնը, և այսպէս, այս երկու յանկարծազան չարաչառի մահերու միջեւ հոստատուեցաւ տեսակ մը կապ որ զայնս կը պարզէր մին միւսով:

Այն գաղափարը՝ թէ տիկին տը Վօտուիգուռի մահը կըրնար ոճրի մը արդիւնքը լինիլ, և ո՛չ մի կուս մտքէն անցած էր և կրնար անցնիլ: ամէն ոք գիտէր թէ երկար ամիսներէ ի վեր այս դեռատի կինը տկար էր և կը հիւժէր տակաւ: զինքը տառապեցնող հիւանդութիւնը թուէր շարունակել իւր կանոնաւոր ընթացքը, և այն վերջի պատահարներն որք յանկարծօրէն հիւանդ կնոջ մահը փութացուցին, շատ չէին տարբերեր այն պատահարներէն որոց ենթակայ էր ի վաղուց: Վարպետօրէն մտածուած շարութիւն մը գիտցած էր ընտրել և սահմանել թիւնաւոր նիւթն, այնպէս որ կարելի եղած էր քօղարկել անոր հետեւանքները հիւանդութեան կանոնաւոր նշաններուն ներքեւ, միանգամայն աստիճան առ աստիճան եւս առաւել յերեւան բերելով զայնս, մինչև մահացու լինելու աստիճան: Գալով այն նշաններուն որք կըրնային թոյնը մատնել, միայն տօքթէօր Թալլըվօ կրցած էր կասկածիլ այդ մասին՝ շնորհիւ իւր բարձր գիտութեան և կորովամտութեան: Եայտնի է արդէն թէ ակոնիտոնը՝ գիտական զննութեան ընդհանրապէս այնքան անհաշտ, բուսական թոյներուն մէջ այն թոյնն է՝ որ մարդկային կազմութեան մէջ արտաքին և կամ ներքին նուազագոյն հետքը կը թողու:

Մինչդեռ օրիորդ Թալլըվօ, ժառանգորդ իւր հօրեղբոր, կը շարունակէր իւր հիւանդ մօրն հետ բնակիլ ի Լա Սօլէյ, Վօտուիգուռի կոմսն իւր հուսկ յետին պարտականութիւնները մատուցանելէ վերջ իւր տարաբաղդ կնոջ, փոքրիկն ժանի հետ մեկնեցաւ ի Վառապիլ, Անդ մնաց մի քանի շաբաթ իւր սուգը միացնելով Ալիէթի մօրն ու ազգականաց սուգին: Այդ սուգն անկեղծ էր: Եթէ Պ. տը Վօտուիգուռ յոյժ տառապած էր իւր անյարմար ամուսնութեան պատճառաւ, եթէ քանիցս անխճած էր այն օրն յորում ամուսնացած էր մի կնոջ հետ սրոյ բոլոր զգացմունքն և ճաշակներն հակառակ էին իրեններուն, եթէ վերջապէս նա զգացած էր իւր կնոջ մօտ բուռն սէր մը ուրիշ կնոջ մը համար, այսու հանդերձ այս առաջին ժամանակներն, ի յիշատակ իւր վաղամեակի ամուսնոյն, կ'զգար ոչ նուազ խորին և չլիթ վիշտ մը կրկնելի գթութեամբ մը խառն:

Աչնայն, Պեռնաու Անգլիա մեկնեցաւ իւր ազգակցաց, Գուռթհէօզէնց մօտ, և ձմեռն մէկ մասն հոն անցուց որսալով ու ճամբարդելով: Ի Ֆրանսոս դառնալով և ժամանակ մը դարձեալ ի Վառապիլ իւր աղջկան մօտ բնակելէն զինի, իւր կնոջ մահուանէն յետոյ առաջին անգամ լինելով դարձաւ ի Վալմութիէ: Մեկնած էր անտի՝ առանց զՍապին կրկին տեսնելու: Բայց Վառապիլ հասնելէն անմիջապէս յետոյ, գըրած էր նմա, Պ. Թալլըվօի մահուան առթիւ յայտնելու համար նմա իւր վշտակիր համակրութիւնն և իւր անձնական ցաւակցութիւնները: Օրիորդ Սապին հակիրճ և խոհական պատմութեան մը գրած էր մի և նոյն կիրթ ոճով: Բաւական ժամանակ վերջ, երբ վերադառնալով Վառապիլ կը գտնուէր, երկիցս կամ երկցս դարձեալ գրած էր նմա առաւել անփութօրէն, տակաւ դառնալով այն բարեկամական զուարթ ոճին որ երբեմն յատկանիշն էր իրենց յարաբերութեանց, բայց առանց ու է ակնարկութիւն ընելու այն սիրալիր մը տերմութեան տեսարանին որ տեղի ունեցած էր Ալիէթի մահէն մի քանի օր առաջ:

Երբ Պ. տը Վօտուիգուռ վերստին տեսաւ զօրիորդ Սապին, տակաւին սուգի մէջ էր սա և իւր խստափայլ տրդուզարդն առաւել ի յայտ կ'ածէր իւր գեղեցկութեան գըրոջմը, այն թախծալից և դիւրայոյզ գեղեցկութեան որ մինչև Անգլիա հետեւած էր իրեն և որ տակաւ ջնջած էր իւր յիշողութենէն պատկերն հէգ մեռելուհոյն:

Բայց և այնպէս, նա բուական ժամանակ վարանեցաւ իւր որոշումը տալէ առաջ, որոշում որ կարծես ճակատա-

գրային կերպով պիտի ներգործէր իւր վրայ: Բան մը գաղտնապէս կը հակառակէր ի նա ընդդէմ օրիորդ Թալլըֆօի հետ իւր ամուսնութեան գաղափարին, այսու հանդերձ կրցաւ վերջապէս համոզուիլ թէ ի նկատ առնելով ինչ որ անցած էր իրենց մէջ, յետ ճշմարիտ սիրային յայտարարութեան զոր ուղղած էր առ նա, գիւրազգայութիւնն և պատիւը կը հարկադրէին զինքը կնութեան առնուլ գնա, քանի որ ազատ էր ինքն, ինչպէս և օրիորդն: Բաց աստի, ինքն երկտասարդ էր և կրնար ամուսնանալ, և իւր առաջին ամուսնութեան վըրտալից փորձառութենէն վերջ՝ ի՞նչպէս կարելի էր չընտրել համայն աղջկանց մէջ, բացառիկ դաստիարակութիւն մ'ունենցող այս դեռատի աղջիկն որոյ մէջ ո՛չ աշխարհային փողահաս ապականութեան մը մոլութիւնները պիտի գտնէր, ո՛չ կրօնական նախապաշարման անցուկ գաղափարները, այլ միայն՝ մասաց բարձր մշակութեան հետ՝ պարկեշտ անձի մը զգացմունքը և սկզբունքները:

Ի վեր քան զամենայն, գիտէր թէ ամուսնութեամբ միայն պիտի կարենար տիրանալ նմա, և այս գեղեցիկ, քոջատիրա և վայրագ արարածին տիրանալը տիւ և գիշեր իւր գլխաւոր մտածումը, միակ մտածումը, կիզիչ մտածումն էր եղած:

Պեռնառ ուզեց որ Ալիէթի մահուան տարեդարձն անցնի և յունիսին միայն ի Վառափիլ դարձաւ իւր վերջնական որոշումն հաղորդելու համար տիկին տը Գուռֆէշօղի: Բացատրեց նմա թէ մանչ զաւակ չունենալով, իւր անունը և իւր հօրեղբոր յիշատակը պարտք կը դնէին իւր վրայ վերջնատին ամուսնանալ, կ'ուզէր կնութեան առնուլ զօրիորդ Թալլըֆօ որ ընտրելագոյն աղջիկ մ'էր և առ որ, բաց աստի, մեծ համակրութիւն մը կը տածէր՝ երբեմն իւր աղջկան և իւր կնոջ նկատմամբ ցոյց տուած անձնուիրութեան պատճառաւ: Մեղմանցնելու համար այն ցաւը զոր կը պատճառէր Ալիէթի մօր, Պ. տը Վօտուիգուռ յայտնեց թէ, մտադիր էր փոքրիկ ժանը իրեն թողուլ և միանգամայն թոյլտուութիւն խնդրեց յաճախ ի Վառափիլ զայն տեսնել գալու: Սրտի ճշմարիտ դառնութեամբ ըրաւ այս որոշումն, այսպէս բաժնուիլ իւր զաւակէն զոր կաթոգին կը սիրէր: Բայց այս գաղտնի մեծարանք մ'էր զոր կը հատուցանէր տակաւին, հակառակ իւր կամաց, այն կնոջ որ չէր ա'լ եւս անդ՝ հսկելու համար իւր սիրասուն աղջկան վրայ:

Երեք ամիս վերջ, Սապին Թալլըֆօ՝ Պեռնառի կիներն էր և նոյն տարուոյ ձմեռն եղանակին Եւրօպիոյ զանազան գաւառներու մէջ ճամբորդութենէ մը զկնի, աը Վօտուիգուռի կոմսն և կոմսուհին հաստատուեցան ի Բարիլ Շան-դը-Նիլիզէի պողոտային ճոխ բնակարաններէն միոյն մէջ:

Սապինի հետ ամուսնանալէն շուրջ երկու տարի յետոյ Պ. տը Վօտուիգուռ պարտաւոր զգաց զինքն միւս անգամ գըրիչ առնուլ, և հետեւեալ էջերն աւելցուց՝ երկար ժամանակէ ի վեր ընդհատեալ իւր գաղտնի օրագրին:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՊԵՌՆԱՌԻ ՕՐԱԳՐԻՆ

Բարիլ ֆետ. 1888.

Կեանքս՝ աներկապապէս՝ ներկայ ժամանակիս ամենէ արտասովոր կեանքերէն մին եղած՝ պիտի լինի...: Եթէ այս կենաց պարզ հանդիսատեսը լինէի, այդ իսկ մեծապէս պիտի հետաքրքրէր զիս. ըստ որում ես եմ այս կենաց գլխաւոր դերակատարն, առաւել եւս կը հետաքրքրէ զիս: Այ-

ժամ ճակատագիրս տագնապ մը կ'անցունէ, այնպէս ինչպէս կ'անցունէր տապը տարի առաջ. խայթիչ է այս տագնապն, և կը փափագիմ նորա ինձ ազդած տպաւորութիւններն անձամբ ի գիր առնուլ. տարիքս առած լինելով, թերեւս կարենամ միանգամայն սոյն էջերը զարդարել իմաստասիրական մի քանի արժանաւոր խորհրդածութիւններով:

Երկու բաւ միայն՝ այն տխուր անցեալէն՝ որոյ վրայ միշտ ակնածութեամբ պիտի խօսիմ: Առաջին կնոջս հետ երջանիկ չեղայ և նա ալ ինձ հետ երջանիկ չեղաւ, մինչեւ իսկ մեծ վիշտ կ'զգամ կարենալ երթադրելու թէ իւր ծագիլ հասակը վշտերով խորապակուեցաւ: Այսու հանդերձ ի՞նչ բան կրնամ մեղադրել անձիս. նա հաւատք ունէր, իսկ ես չունէի. ուրիշ բան չկայ: Իմ ճշմարիտ յանցանքս՝ չկանխատեսելու եղած էր այն մեծ դժբաղդութիւնն որ յառաջ պիտի գար միաւորութենէն երկու անձանց, որք հակընդդէմ տեսակէտներով կը դատէին կեանքը, մին իրբեւ աստուածային պարգև մը նկատելով զայն, միւսն՝ իրբեւ բաղդին մի պարգեւ: մին իրբեւ փորձ և յառաջաբան մը, միւսն՝ իրբեւ ցկեանս ուրախութիւն մը և անվախճան արկած մը: Սկներե է թէ, այն երկու տեսակ կեանքերը զորս կը վարեն մարդիկ սոյն երկու տեսակէտներէն միոյն կամ միւսին համաձայն, իրարմէ խիստ տարբեր լինելու են:

Այս մասին չխօսինք աւելի:

Եթէ առաջին կինս զիս կը արտմեցնէր, երկրորդը չափէն շատ աւելի կ'զբօսեցնէ զիս: Պիտի համարձակիմ ըսել — անցողակի ժողովրդական ասացուած մը գործածելու համար — թէ կրօնը չէ որ կը խղէ գնա: Առաւել ճիշդը խօսելով, գիտութիւնն է: Արդի կինս ամէն բանի տեղեակ է, բայց կը վախճամ թէ մի գուցէ իւր գիտցածներն անբաւական կերպիւ մարտած լինի: Ժամանակիս ընթացքին բաւական տեղեակ եմ և բաւական ալ կարգացած կամ, առաւել ճիշդ, աչքէ անցուցած եմ հեղինակներն՝ զննելու համար զայն իւր իմաստասիրական տեսութեանց մէջ: Բայց ինձ կը թուի թէ տիկին Սապին չորաչար կը գործածէ այս տեսութիւնները և աւելի հեռուն կը մղէ անոր տրամաբանութիւնը: Ի հաստատութիւն իւր գործոց, իւր փափաքանաց և տհաճութեանց, նա գիտական փաստ մ'ունի միշտ: Մինչև գերեզման մտնելս պիտի խնդամ կարծեմ այն պատասխանին համար զոր տուաւ ինձ մեր ամուսնութենէն քիչ ժամանակ վերջ, երբ մանչ զաւակ մ'ունենալու փափաքս կը յայտնէի իրեն. քանզի իւր մի քանի վարմունքներն, կը խոտովանիմ թէ, փոքր ինչ զարմացուցած էին զիս:

— Բարեկամս, ըսաւ ինձ, այս մասին իմ վրաս յոյս մի՛ դնէք: Մայրութիւնը մին է այն գերութիւններէն զորս բընութիւնը հարկ կը դնէ մեր վրայ իւր մասնաւոր գոհացման համար, և յօգուտ իւր գործոյն: Արդ, դուք գիտէք որ բընական օրինաց նկատմամբ աստուած մ'եմ ես: Իմ սկզբունքներս, — որք արդէն չեն տարբերի կարծեմ ձերիններէն, — կը կայանայ ըստ կարելոյն կենաց ուրախութիւնները վայելելու և վիշտերն ի բաց վանելու մէջ: Բնութիւնն ընդհանրապէս հրապոյր մը կցած է իւր մէջ մի հարստահարիչ օրինաց՝ զայնս ընդունել տալու համար մեզ: Այսպէս, նա հեշտութիւնը հնարած է՝ ախորժակ դրդուելու համար դէպ ի մայրութիւն: Ազատամիտ միտք մը սկսեց է ախորժակը գոհացնէ և մնացածը մէկ կողմ թողու: Պիտի ըսէք ինձ թէ եթէ ամէն ոք ինձ պէս խորհի, աշխարհի վերջը պիտի գայ շուտով: Կը պատասխանեմ թէ բնաւ փոյթս չէ: Բնութիւնը, ինչպէս գիտէք, հոգ մը միայն ունի, պահպանել տեսակը. իսկ զանհատը կը քամահրէ: Լաւ ուրեմն, ես ալ անոր նման կը քամահրեմ անհատը, բայց՝ աւելի քան զայն՝ տեսակն ևս կը քամահրեմ: (Շարունակելի)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՕՖ ԵՂԲԱՐՅ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան:

Թիւ 1. Լիանսին	Փունթ 32 Դահեկան
» 2. Չինական վարդ	» 30 »
» 3. Պուքէ էմբէրիալ	» 26 »
» 4. Ֆուչէֆու	» 20 »
» 5. Տնական թէյ	» 16 »
» 6. Խնայողական տեսակը	» 12 »

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 արամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կտավարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն: Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգիլուած է նոյն իսկ ծխելն:

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՇԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրք նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել: Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն:

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահճէ դարու Շէյխուլլալա խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ էրպէնկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ Նէրաիւպան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսկիճեանի դեղարանը, Իսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց թիւ 25 Միւսիւ Աքէստօրիսիսին դեղարանը եւ Գատըգիւղ Նպարավաճառ Բարաթանաթիօն մթերանոցը թիւ 19:

(10-18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ԵԱՎԲՈՒՆԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պահճէ—Գաբու, ձելալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գըտնուին Չինէ եւ Ճավայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերբնորի եւ աղնիւ ու անուշարոյր ամէն ճաշակի յարմար: — Կողանդի նուէրներու համար՝ թէյով լեցուն ծաբոնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբ եւ ձեւերով գեղակերտ եւ նկարազարդ տուփեր: — Յաճախորդաց գոհացում ապրու համար ընտելած ջր խնայուիր: — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ: — Գիները որոշ եւ խիստ չափաւոր: — Զի՛ք սակարկութիւն:

(4-4)

ԿԱՐԱՊԵՏ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Վաճառատուն ֆէսի եւ Թօհաֆիէի

Կ. Պոլիս, Պահլէ-Գաբու, Հաֆիէ հարաբէր շաքարաւաճառ Հաճէ Պէլէր պալատի խանութի տէր: Թիւ 54

Ընտիր ֆէսեր ամէն տեսակէն, Պէզիկի եւ այլ խաղի թղթեր եւ մարքէթ: Ճաշակաւոր քաւաթներ, թաշկինակ, գուլպայ: Հոտաւետ նիւթեր, բորթմօնէ, հովանոց, գաւազան, լաստիկ—կալօշ, եւ այլն:

Ճաշակաւոր ընտիր ապրանքներ չափաւոր գիններով:

11-12

—o—

ՆՈՐ—ԴԱՐ

Ամենօրեայ Լրագիր

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Ի ԹԻՖԼԻՍ

Տէր Է. Խաթաբէր՝ Սպանդար Սպանդարեան

Յառաջիկայ 1892ի սկիզբէն կը մանէ Իւր Իններորդ տարին

Թուրքիոյ, Եւրոպիոյ եւ Ամերիկայի համար բաժանորդագրին է (ճանապարհի ծախսով) 40 ֆրանք:

Խմբագրութեան հասցէն՝ Redaction du journal «Nor-Dar»

TIFLIS (Caucase)

ԿԻՒՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան համամ, Ֆնտգլեան խան, 41

Եւրոպայէն նոր բերուած հետեւեալ ապրանք կը վաճառուին 12 դրու 30 փարայի:

1 Գծաւոր բրդեայ արանց ֆանելա:
3 Զոյգ կապարադոյն բրդեայ արանց ֆանելա:

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց ֆանելա:

2 Զոյգ կապարադոյն բրդեայ կանանց գուլպայ:

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրո. թեամբ ներքնաշապիկ:

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրո. թեամբ ներքնաւարաիք:

1 Անգլ. կտաւէ օձիքով ու թեւնոցով արանց շապիկ:

3 Արանց շապիկ նորածեւ ճերմակ կուրծք:

6 Արանց շապիկի նորածեւ օձիք:

3 Զոյգ քթանէ շապիկի թեւնոց:

1 » մէջը ֆանելայով ձեւնոց:

1 Հատ գունաւոր արանց ֆանելայ վարաիք:

1 Հատ բրդեայ կանանց ուսնոց:

1 » բուրդէ հիւսուած կանանց ծածկոյթ:

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց չըրջազգեստ:

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ:

2 » ամենալաւ տեսակէն մետաքսեայ փողկապ:

12 Հատ գունաւոր կամ ճերմակ քթան թաշկինակ:

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ:

4 » կարմիր գծաւոր խաւուռ:

3 » շատ մեծ ոտքի խաւուռ:

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղկենկար քթան խաւուռ:

3 Հատ ծայրերը շինուած լաւ քթան խաւուռ:

6 Հատ գունաւոր քթան՝ սրբիչ:

1 » մետաքս կամ բուրդ կանանց լասթիքի ֆանելայ:

1 Զոյգ շատ երկայն անգլ. չլարչէ վարադոյն:

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լաւանտա, 1 օճառ, 1 օտը քօյօնեղ:

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քթան թաշկինակ:

4 Հատ լաւ տեսակ արանց քթան թաշկինակ:

6 Հատ շուրջը անթիքայով ճերմակ կանանց թաշկինակ:

6 ծաղկենկար տամասէ անձեւոց:

1 Հատ ծոպերը շինուած 8 հոգինոց սեղանի ծածկոյ:

6 Անգլ. արծաթէ ապուրի դգալ:

3 Հատ դանակ եւ 3 պոտաւառքաղ:

2 » գոյնզգոյն լամպի ֆանելայ:

2 Զոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ:

3 Հատ Լիոնէ մետաքսէ գունաւոր թաշկինակ:

2 Հատ շատ մեծ քթան խաւուռ:

2 » լաւ տեսակ դալ՝ մետաքս թաշկինակ:

6 Հատ Անգլ. արծաթէ ոտքով կամ անուշի դգալ:

3 Բրդեայ լասթիքի տղոց գուլպայ:

Յանձնարարութեան համար պէտք է գրել «Մաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին:

3-12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՆԱԿ ԳԱՇՆԱԿԱՅ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էՌԱՌԻ

հռչակաւոր գործատան

Գնումն եւ վաճառումն

Փոխանակութիւն ճիւղ դաշնակայ հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշնակներ տնտեսական վճարմամբ և մասնաւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործարաններէն Քլէնի դաշնակները, խիստ զիւրմամտեղի գիններով։ Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն գործարանաց դաշնակներէն կը բերուին։

Վարձու նոր դաշնակներ չափաւոր գիններով։

Բաժանորդագրութիւն դաշնակայ յարգարման (accord)։

Դաշնակայ նորոգութիւն, գաղղիական ընտիր նիւթեղէններով։

ՀՐԱՆՈՒՄ Դաշնակները չհինցնելու և լաւագոյն վիճակի մէջ պահելու։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն խնամով և փութով կը կատարուին։

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար գիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա Սարայի գիմաց, Խրիսթաքի խան, Թիւ 10։ (14—30)

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

132րդ ՎԻՃԱԿԱ ՀԱՆՈՒԹԻԻՆԸ տեղի պիտի ունենայ յաւաքիկայ Յունուար 20ին։ Մեծ պարգեւն է,

300,000 ֆրանք

Գին բաղդատումն 7 1/2 զրուշ։

Գաւառներէն ստանալ փափագողք կարող են գիմել «Ծաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին, տոմսակի գնոյն հետ զրկելով 40 փարա աւելի փոստի ծախուց համար։ Գրասենեակը պատասխանատուութիւն չստանձնէր, եթէ պատահի որ զրկուած նամակը ճանրան մուտքի և տիրոջը ձեռքը չը հասնի։ Տոմսակին տպահովագրեալ նամակով ստանալու համար, պէտք է 40 փարայի տեղ 90 փարա աւելի զրկել։

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Լսկի-Ջապիէ փողոց, քիւ 61

ՅԱՆԷԼԱՍ ԱՊՐԱՆԱՅ ՀԻՒՍՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մանմուտ փաշա, Բիւրքնի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է Ի Պահչէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը։



Թէ՛ մեծ եւ Թէ՛ փոքր քանակութեամբ՝ արանց, կանանց և տղայոց համար՝ անխառն բրդէ, մանածէ, ևայլն, ուղուած թանձրութեամբ և ուղուած չափով յանձնարարութիւնք կ'ընդունուին ու պատրաստ կը ծախուին ֆանէլա շապիկներ, վարտիքներ, միսոցուներ, ևայլն։ Ապրանքները կը մրցին եւրոպականներուն հետ Թէ՛ աժանութեամբ և Թէ՛ իրենց նուրբ ճաշակով։ Յաճախողք ամէն կերպիւ գոհ պիտի մնան։

12—12

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովնանեան կոշարց փաձառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԴՈՐՄԵԱՅ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաֆա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մանմուտից—ձատտէսի, Թիւ 70 եւ 59։

Ա՛գղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատրասեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուսական կախիակաղաք (առմա քիլիտի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բողմազան գործիներ, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գնեցով։ Ընկերութեան մեքենագործն գիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար։

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանոնաւոր կը կատարուին։ Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով և եւրոպայէ բերել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք։

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԲԱՐԳ

10—24

70, Եօրկանճըլար ձատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՆԱՊԱԿ ԳԻՆԻ ԳԱՐԹԱԼԻ

ԽԱՎԵԱՐ — ԽԱՆ, ԹԻՒ 91

Վերջին ժամանակներս գինեղնութեան արգիւնաւորութեան վրայ յաճախ կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը շեշտուի սոյն ձեռնարկին մասնադէտ համարուող Սուքիասեան Յակոբ էֆէնտիի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խաղողներէ՝ ունեցած սեպհական և չրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ ընտրեալոյն և անարատ գինիներ, որոց մէջէն յատուկ գնահատութեան արժանի են՝ ԳԱՐԱ—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐՍ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ԲԷՉԻ—ՄԷՄԷՍԻ և ՆՈՒՐՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաև ՄԻՍՔԷԹ—ՉԱՎՈՒՇ, ԳԱՐԱ—ՉԱՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳԱՐՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ձերմակ և Թէ՛ աւելի գինիներ, որք մայրաքաղաքիւ առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնարարուին ամեն կարգի հիւանդացի — Կը ծախուին չիչով պատրաստ, նաեւ քաշով և տակառով։ Յատկապէս յանձնարարելի են մեծածախ սեղաններու և խրախճանաց հանգէսներու ու չքանդաններու համար։

12—15